

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական,

547 ՏԱՐԻ, Ե. ՇՐՋԱՆ



ԹԻ 4



24 ՅՈՒՆՈՒԱՐ 1904

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խմբագրական. Տ. Ա. — Հրածես մը. Յ. Գ. ՄՐՄԸՐԵԱՆ: — Կանացի տպարաններ. «Իմ Դոխան». ՄԱԹԻՆՏԷ ՍԷՐԱՕ. բարգմ. Չիթի-ՍԱՐԱՅ. — Քաղաքական աշխարհ. Մ. ՆԱԹԱՆԵԱՆ, — Նուադած ձայներ (Բանաստեղծություններ) ՎԱՐԴԳԷՍ: — Ֆրանսական Գրականություն: Լեոն Եր Թենտոյ վիպասանը — ձամբորդության յիշատակներ. Գ. ԲՈՒԼՃԵԱՆ, — Գիտական. Քրոնիկ. ՆՈՒՊԱՐ, — Թրքուսներ (Բանաստեղծություններ) ԱՇՈՏ Բ. ՔԷՉԵԱՆ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ Շաբաթաբերի տարեկան բաժանորդագրին է Կ. Պոլսոյ համար ԲԱՍՈՒՆ ԴՐԵ. Եւ գաւառներուն համար յիսուն դր., կանխիկ վճարելի: Արտասահման 12 Ֆրանկ կամ 5 րուպի: Թղթատարական ծախքը Խմբագրության վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրությունը չընդունուի: Բաժանորդագրությունները կը սկսին ամեն ամսոյ մէկին: ՄԱՍԻՍ հրատարակ կ'ելլէ ամեն շաբաթ առտու: Այն բաժանորդները որոնք պակաս քեր ստացած են, պէտք է իսկոյն իմացնեն Խմբագրության: Ժամանակ անցնելէ վերջ՝ այս տեսակ առարկությունները նկատողության չեն առնուի:

Չի հրատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուի:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասշէլի պայմաններով:

Ձեռ. ԲԷ ԿՐԾԱԽՈՒԻ ՀԱՏԸ ԲԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ

Հասցէ

درعليه ده غلطه ده (ماسيس) غزتيه اداره

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլիս, Ղալաթիա

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

LA CONFIANCE



ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵԱՆՔԻ ԴԵՄ

Ապահովագրական լայն ընկերութիւնը, որ հաստատուած է ու կը գործէ Ֆրանս. կա. ռաւարութեան ֆոնդայիս ներքեւ, երաշխաւորեալ դրամագումար ունի՝ հրդեհի ճիւղին համար 56,000,000 ֆր. եւ կեանքի ճիւղին համար 36,000,000 ֆր.:

ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ մէկն է Եւրոպայի ամէնէն պատուաւոր եւ ամէնէն վստահելի ապահովագրական մեծ ընկերութիւններէն, եւ ուր որ մասնաճիւղ հաստատուած է՝ միշտ գործած է իր բոլոր յաճախորդները, իր կատարեալ ուղղամտութեամբ եւ կանոնաւոր գործառնութիւններով:

Այս վաղեմի ընկերութիւնը մեծ վարկ կը վայելէ ամէն կողմ. եւ իր գործառնութեանց ու վստահելիութեան վրայ գաղափար մը տալու համար թուենք մէկ քանին այն հանրածանօթ հաստատութիւններէն, որոնք ապահովագրուած են ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍի:

Ֆրանսայի նահանգներու եւ գաւառներու կարգ մը պաշտօնատուներէն զատ, Բարիզի՝ Օբէրա, Վոստիլ, Նուվօթէ, Ամպիկիւ, Ֆուլի-Տրամաթիք եւայլն թատրոնները, նաեւ Պոստոյի, Թուլուզի, Լիոնի, Մարսիլիայի, Նանդի, Նիսի, Ալճէրիոյ, Բուէնի, եւ ուրիշ տեղերու մեծ թատրոնները:

Պօն Մարշէն, Լո-վրի վաճառատուները, Բիկմայիոնը, Բրէնթանի, Պէլ-Ժառարիէնի, Օթէլ տը Վիլի եւ Սամարիթէնի մեծ վաճառանոցները:

Թրանսաթլանթիք, Հաւր-Մարսիլիա նաւարկութեան, Մովային Փոխադրութեանց, Ֆրանսական Թրամուէյներու, խնայողական երկաթուղիի ընկերութիւնները:

Մասնաւորապէս ուշադրութեան առնուելիք պարագայ մըն է որ ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ ընկերութիւնը, իր Կազմական Կանոնագրին համաձայն, պարտաւոր է ամէն վեց ամիսը անգամ մը իր ելմտական կադրութիւնը ենթարկել Ֆրանսայի Առեւտրական նախարարութեան քննութեանը: Նոյնպէս Այնի քաղաքապետութեան, Բարիզի Առեւտրական Սենեակին եւայլն:

Ընկերութեան դրամատունն է Քրէտի Լիոնէն:

Այն ընկերութեան Պոլսոյ կողմի գործակալութիւնը ստանձնած է մեր հրապարակին վրայ իր պատուաւորութեամբը ծանօթ

ԳԱՌՆԻԿ ԱՃԱՌԵԱՆ

Որուն պէտք է դիմել՝ թէ՛ հրդեհի եւ թէ՛ կեանքի ճիւղին վերաբերեալ ապահովագրութեանց կամ տեղեկութեանց համար: Գ. Աճառեան կը վարէ նոյնպէս Compagnie d'Assurances g n rales Maritimes ծովային ապահովագր. ընկերութեան Պոլսոյ կողմի գործակալութիւնը:

Հասցէ. — Պոլիս, Մահմուտ փաշա, Պէտիք Երլարզ խան, թիւ 14, Լա Գօնֆիանս ա. ապահովագր. ընկ. Գրասենեակը:

Գառնիկ Աճառեան կը վարէ նաեւ, իր անձնական սեփականութիւնը հղող անթիքի վաճառատուն մը, Պոլիս, Շուկայ, Հաֆաֆլար, թիւ 46, ուր գաւառներէն առուծախի յանձնարարութիւններ կ'ընդունուին:

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՅ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ
ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՁ 1828-1829

Հ Ր Դ Ե Հ Ի Ձ Ի Ի Ղ

Մինչեւ 1902ի վերջը հատուցեալ փասք	274,000,000	Ֆր.
1902ին գանձուած ապահովագրին	24,000,000	»
Դրամագլուխ երաշխաւորեալ	119,000,000	»
Ապահովագրեալ դրամագլուխ	21,500,000,000	»

Կ Ե Ն Ա Յ Ձ Ի Ի Ղ

Մինչեւ 1902ի վերջը հատուցեալ փասք	129,000,000	Ֆր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	272,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստք	158,000,000	»
1092ին գանձուած ապահովագրին	12,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիոն»ի ապահովագրելոց կ'ընծայեն հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ՁԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՁ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց՝ գեղջեալ գիներով: Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան պայմանները: Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիոնի ապահովագրողք ՁԵՐԾ են այն վնասներէն եւ յուսախաբութիւններէն, որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ շահաբաժիններու բաշխման (accumulation des b n fices) ՅՈՒԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դուրեամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին:

Ընկերութեան դրամատունն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԲԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելի Տնօրէնութիւն

Պոլիս, Սուլթան Համամ, Բասաժ Բաքրբէր Օղլու

Մասնաձեւը՝ Ղալաթիա, Ինսպէթ Խան: — Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքացի մէջ



ՅՈՎԱԿԻՓ ՊԱՆՊԱՆԵԱՆ

(ՄԵՂՐՈՒՆԻ)

ԱՏԱՄՆԱՐՈՅԺ

Մուգաֆէրիէ Հիւանդանոցին եւ

Պարսկական Դեսպանատան

Բերա, Մեծ Փողոց, Թագսիմ, քիւ 61

Զբոսանքան աբադքան

Պալպալեան ամէն օր ակոսայի ամէն տե.

ապ հիւանդութիւններով տառապողներն կ'ընդունի. իսկ Ուրբաթ, Կիրակի եւ երեքշաբթի մինչեւ ժամը 5: Գիշերուածն օր եւ է ժամուն կարելի է դիմել: Պալպալեան կ'երաշխաւորէ իր լեցուցած ու չինած ակոսաները, ծորեկները ակոսայ քաշել տալու համար որոշ վարձք մը չկայ. քաշել տուողի կամքէն կախեալ է:

Աղիւսներուն ձեռք

ԱՊԱՌԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ

ՀԵՐՃԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՎԵՐՁԻՆ ԳԻՆ



Եթէ կ'ուզէք ամէն տեսակ գոհարեղէններ ունենալ, աժան ու ճաշակաւոր, թէ՛ արեւելեան եւ թէ՛ եւրոպական ճաշակով պատրաստուած, ժամացոյցներ, արծաթեայ դաւաղաններ եւայլն, Մշիմեցէ՛ք Պոլիս, Ոսկերչաց Շուկան, Մեծ-իողոց, Թիւ 13:

Հարիւրին 20 կանխիկ, մնացեալին համար 100ին 5 չաբաթական վճարում: Կանխիկ գնողին համար հարիւրին 5 զեղչ: Գործածուած գոհարեղէնները եթէ փաստուած չեն՝ 100ին 10 զեղչով եւ կ'առնուին իսկ ապառիկ գեղեղներէն՝ 100ին 15 զեղչով:

ՀԱՋՆՐԱՅԻՐ ՏԱՐԻՆԵՐ

Աս նոր գիւտի, Օրուան Հետ Համեմատելով խիստ քիչ կարեւորութիւն մը ունին: Խողատանձ (սրբաճա) և արեան տկարութիւն և միւս արեան քեշութեան հետե



Հիշե՛րու վրայ ասոր ուշա-
դրութիւն ընել պէտք է:

23

անքնե՛րը, սրոնք մարմնոյ տկարութեան նշաններն լին, պէ-
պիտի աղետները դարմանող և բժշկող դեղ մը կրնայ միայն ամեն-
կարեւոր և ամենասքանչելի բան մը համարուիլ: Ահաւա՛հ
հիմայ աշխարհիս մէջ կայ դեղ մը բոլոր այն անտեղութեան դէմ

SCOTT'S EMULSION

որ Առեգական միջնորդութիւն մէջ գտնուած փոշիները չորցնելու
պէս, նոյն հիւանդութիւնները կը բժշկէ:

ԸՍԳՕԹԻ ԲԱՂԱԳՐՈՒԹԻՈՒՆ

Նաև մարդկային մարմինը շրջապատած բոլոր անտեղութեան հետե
կը վերնաէ:

ԸՍԳՕԹԻ ԲԱՂԱԳՐՈՒԹԻՈՒՆ

Արեան տկարութիւն ունեցող աղոց կեանքը կը փրկէ:

Բոլոր բեռնորթները և բեռնաւորները և ծնին:

ՑԱՄԱՔԱՅԻՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՄԵԾԱԳՈՅՆ ԱՊԱՀ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

ՎԻՔԹՈՐԻԱ ՏԸ ՊԵՐԼԷՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՄԷՆ ԴՐՈՒԹԻՒՆ ԿԸ ԳՈՐԾԱԴՐԷ

ուրի կեանքի, օմիսի, սակածի, ցւահ թուակի նիւրե

VICTORIA ՎԻՔԹՈՐԻԱ ՏԸ ՊԵՐԼԷՆ կեանքի ապահովագրութիւններ ունի թէ՛
DE բժշկական քննութեամբ եւ թէ՛ առանց բժշկական քննութեան
BERLIN Առանց բժշկական քննութեան եղած կեանքի ապահովագրութիւններ
բուն վճարումները շաբաթական մասնավճարներով տեղի կունենան,
սկսեալ 5 դրուչէն

Ապահովագրեալ գումար 190 չից ֆր. 1,244,457,577

Պահեստի դրամ 190 չից » 451,284,214

Հաստատուած 1853 սեպտ. 20ին առ-
բայակ օմ հեղափոխութիւն եւ ուղղակի-
կառավարութեան հսկողութեան ներ-
քէ:

ԸՆԿ. ԴՐՈՒՍՏՈՒՆՆԵՐԸ

Օմս. Կայսր Պանք
եւ Բրէտի Լիմիտ

Լիպգոր Ընդհ. Ներկայացուցիչ
ՄԻՀՐԱՆ ՍԻՆԷՄ ԳԱԼՖԱՅԵԱՆ

Տեսուչ
ՅԱՐՈՒԹԻՒՆ Մ. ՔԷՉԷՃԱՆ

Պոլիս Քաթրեքթորիոն իսան
թիւ 45-Եւ 45.Ե.

ՄԱՍԻՆ

54^{րդ} ՏԱՐԻ, Ե. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 4

24 ՅՈՒՆԻՈՒՄ 1904

ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ՄԷՋ

Մանգուսի էֆեա հրատարակեց իր խմբագրապետին՝ Բասիմի պատկերը, ոչ թէ այդ հանգամանքով, այլ իրրեւ հեղինակը «Կնճուտ հանգույց»ին որով ժողովրդային վիպասանը կ'օժտէ այդ օրագրին Թերթօնի բաժինը, ինչպէս ասկէ առաջ հրատարակեց ուրիշ ո'չ նուազ շահեկան ու հրահանգիչ վիպասանութիւններ: Բասիմը, մեր լրագրութեան մէջ, բոլորովին նոր երեւոյթ մը ստեղծեց: Թերթօն—վէպը՝ ճիշդ եւրոպական, մանաւանդ ֆրանսական օրաթերթերու դրութեամբ, օրը օրին ընթերցողը հեւիհեւ հետաքրքրութեան մէջ պահող, տեղական ու իրական կեանքի պատկերացումներով: Այն կէս—գրական ու կէս—հոգեբանական քանի մը հատորները մէկդի առնելով, —ինչպէս «Սնհետացած սերունդը», «Լարժապետին աղջիկը» և այլն, առանց յիշելու Տիկին Սըրբուհի Տիւսաբի և Ծերենցի վէպերը, —որոնք այնքա՛ն հաճոյքով կարդացուեցան իրենց ժամանակին ու մինչև այսօր ալ կը փնտռուին՝ նոր համեղ սերունդին կողմէ, վիպասանական ճիւղը դադարի չըջան մը ունեցաւ և Բասիմին վիճակեցաւ նոր դարկ մը տալ և անորինակ եռանդով և յարատեւութեամբ մշակել զայն:

Նորավէպը, մեր կեանքէն նորավէպը, աւելի դրական ճաշակներու գոհացում կուտար, ինչպէս մինչև այսօր: Հարկ էր բուն իսկ ժողովուրդին, միջակ զարգացման տէր դասակարգերուն համար ալ գրել. Պուրժին, Ֆլոպետին հետ՝ պէտք էր մեղի ժիւլ Մաուի մը, Էմիլ Կապոտիօ մը. Բասիմ այդ պէտքին գոհացում կուտայ: Թիֆլիզի Հրատարակչական մարմինը առաջինը եղաւ զինքը

դնահատող, դնելով ու իր ծախքով հրատարակելով անոր վէպերէն մէկը. անկէ ի վեր, շարքը կը շարունակուի Պուսահայ լրագրութեան մէջ, վերջին երկու տարիներս Մանգուսի մէջ:

Երբ մէկ կողմէ Թարգմանութեանց միջոցաւ, օտար դրականութեանց լաւագոյն էջերը, օտար վիպասանութիւնները ընտրանօք կը ծանօթացնենք մեր այն ընթերցողներուն որոնք այս կամ այն եւրոպական լեզուն տեղեակ չեն, —ու դիտելի է որ վերջին ժամանակներս միմիայն ֆրանսացի հեղինակներու գրչին արտադրութեանց կառջած չի մնացինք, գերմանականէն ու իտալականէն ալ նմոյշներ տալով, —«Կնճուտ հանգույց»ին հեղինակը, ինքամիտփուած իր Թերթօնաբաժինին մէջ, մեր աչքին առջև կը պարզէ շարքը տիպարներու որոնց կը հանդիպինք շուրջերնիս, կը նկարագրէ միջավայրը որուն մէջ կ'ապրինք, կ'արձանագրէ խօսակցութիւնները զորս կը լսենք: Երանդ, սեթեւեթ, զարդարում՝ իրեն համար չեն: Բասիմ իր յաջողութիւնը փնտռեց ու գտաւ բնականութեան և պարզութեան մէջ. ուղեց որ արհեստաւորը, խանութպանը, անուս կինը, գործաւոր աղջիկը, ամէնքն ալ հասկնան զինքը ու հետաքրքրուին իր գրուածքներով:

Բասիմին վէպերը այն առաւելութիւնը ունին սակայն որ, իրենց չա՛տ պարզ ոճին հակառակ, ժողովուրդին ճաշակը չեն խաթարեր՝ դրական վէպերէն խորշել տալու աստիճան. ու միեւնոյն ընթերցողը հաւասար հաճոյքով կը փնտռէ ու կը մտնի ընկերային կամ սիրային խորունկ ուսումնասիրու-

Թիւն մը պարունակող նորավէպ մը՝ ինչ հաճոյքով որ կը հետեւի ընտանեկան կամ ժողովրդային վէպին հանգոյցներուն։ Ասիկա Քասիմին ի՛ր ալ դաւանանքն է, որ կը մտնէ գրական վէպին ու ժողովրդային վէպին համերաշխութիւնը ու տարբեր օգտակարութիւնները, և ինք անոնցմէ մէկին յարած ըլլալուն համար՝ միւսին դէմ ելլելու անձկամտութիւնը չունենար, ինչպէս որ, փոխադարձաբար, իր արժանիքը չեն անտեսեր զուտ գրական սեռերով զրազող՝ երբ։

Այս կէտին վրայ որչափ ծանրանանք՝ քիչ է. վասն զի, կարգ մը գրողներ հակառակ ուղղութեան մը սկզբունքը ուղեցին արմատացնել հանրութեան մաքին մէջ, անուղղապէս փորձելով արհամարհել տալ ինչ որ գրական բարձրութիւն և ոճի խնամք ունի, ինչ որ տափակ չէ, ինչ որ սրամտութեամբ ու զգացումով լեցուն է, — ըլլա՛յ նորավէպ, ըլլա՛յ քրօնիկ կամ ֆանթէզի։ Նորավէպը մանաւանդ, սկսելով իր անունէն, — որուն ծագումը այնքան սիրուն հետախուզութիւններու առարկայ դարձաւ ատեն մը Մասիսի մէջ — գրական այն սեռն է որ ամէնէն աւելի գրչի հալածանք կրած է մեր լրագրութեան մէջ, այդ սեռը վայելչապէս մշակել կամ մշակել տալ չգիտցողներու կողմէ։ Եւ սակայն, այս փորձերուն հակառակ, ան իր գոյութեան իրաւունքը ստացաւ ու պահպանեց, թէպէտ շատ քիչերու կողմէ մշակուելով յաջողապէս ու կատարելագոյն, ու այդ քիչերն ալ քիչ անգամ գրողներ և ղան դժբաղդաբար։

Վիպասանութիւնը նորավէպին զեախը կամ նորագոյն բացատրութեամբ մը՝ «կալուածը» չի դրաւեց ուրեմն, ինչպէս երկրորդը չէր կրցած առաջինին պակասը զգալի չգարծրնել, ու նոյն սեռին պատկանող այդ երկու ձևերը դիւստոր յենարանները կը կադմեն այսօր մեր գրականութեան, մանաւանդ լրագրական — գրականութիւն ըստածին։ Նորավէպի առաջին վարպետը, Գր. Զօհրտպ, իր հետեւողները, իր «գպրոց»ը ունեցաւ։ Քասիմ, ժողովրդային վիպասանութեան, թերթօն — վէպին անխոնջ մշակը, ինքն ալ անշուշտ պիտի ունենայ իր հետեւողները։

Տ. Ա.

ՀՐԱԺԵՇՏ ՄԸ

Ազնի՛ւ Խմբագրապետ Մասիսի,

Կը խնդրեմ Ձեր ազնուութենէն՝ իբր հին բարեկամէ՛ որ հաճիք ծանուցանել մեծարոյ բանասէրներուն և ընթերցող հասարակութեան թէ՛ կրկնեալ ու բազմակրկնեալ անարժան պատճառներով՝ որոնց մի մասին ի սկզբան լուռ մուռ համբերած եմ և մի մասին ալ յայտնած եմ առանձինն ազնուամիտ ծանօթներուս՝ թուականէս սկսեալ որոշած եմ անպայման ժամանակով ա՛լ չբանասիրել ու չպատասխանել օրագրական հրապարակին վրայ ի՛նչ ալ որ ակնարկուի հոն իմ անունիս — ամէնաբարձր պատիւէն մինչև ամէնավատ անարգանքը — չպատասխանել, բայց միայն ի հարկին օրագրականէ տարբեր հրապարակներու վրայ։

Սիրտի ցաւով կը կցորդեմ նաև սոյն բանասիրական ծանուցումիս թէ իբրեւ քսան և վեց տարուան գիտնասէր (amateur) գրող՝ ինչեր որ հրատարակած եմ օրագիրներու, հանդէսներու և գիրքի մէջ՝ այլ և այլ և կամայ պատճառներով, մանաւանդ մեկուսի ընկուլթեանս հեռաւորութեանս համար, նկատելի են եղծեալ ու անհարադատ, բայց ի Աբեւեյի, Մասիսի ու հատ մըն ալ Մանգումբի մէջ հրատարակածս դաս մը պատմական ու փիլիսոփայական ընձեռուածներէն^(*) ու «Ալլուիա» իմաստասիրական տնուն մատենիկէն։

Շնորհակալութիւն Ձեզի և պատուական ընթերցողներուս անմոռանալի համակրանքին, շնորհակալութիւն կանխաւ այն բարեկամ օրագիրներուն որ պիտի հաճին անդրատպել այս բանասիրական ծանուցումս՝ խաղաղ սիրտով ընդունելով իմ այս խաղաղիկ հրաժեշտը։

Զեղ Զ. Գ. ՄՐՄԸԲԱՆ

(*) Արմաշ, Անոր հրեշտակները, Կեանքիս յաւելուածները, Նիւթականութիւն և Հոգեկանութիւն, Բառերուն այժը, Աղքատները և Մամբրէ Սրբազան Մարկոսեան։

ԿԱՆԱՑԻ ՏԻՊԱՐՆԵՐ

Ռոմաի ամենեկն բարձր ու հովասուն դիրքերեն մեկուն վրայ, գեղեցկագոյն ու լայնածափ սեղը կը գրաւէ Սան Նիֆոլո սա Թօլէնթինօի եկեղեցին վանքը ու ժողովարանը վարժարանը որոնք հայ կաթողիկոսներուն կը պատկանին, Յաւիտենական փառաբանութեան համար եկեղեցիներուն մէջէն միակն է ան ուր հայերէն պատարագ կը մատուցուի. եւ ուր կը դիմեն նաեւ բազմաթիւ օտարազգիներ, Մէկէ աւելի անգամներ, արարողութեան մերկայ ըլլալու համար կերթան հոն, ինչպէս նաեւ վանք՝ ծանօթ վարդապետներու այցելութեան եւ կամ ծերունազարդ ու պատկառելի Բուպեան Գերապայծառին ներկայանալու համար եւ անսահման ազնուութիւնով դիւրութիւններ կը շնորհէ ինծի Վասիկանի դամազան փակ մասերը այցելելու համար:

Իսպիոյ շնորհալիայ Մայր-Թագունին ալ կը բնակի վանքէն ոչ շատ անդին. Բայց ցոյց տալով իր անհատական արհեստներուն վրայ գրաւիչ տեսարան մը ունի հայկական պատկերները: Այդ այցելութիւններու միջոցին եւ որ մէկէ աւելի անգամներ բարեբաղդութիւնը տեսնելու ինծի տեսնալու Նորին Վեհափառութեան անցքը հետեւողներու պատկերները իմ հետ ու ժողովրդային ծախողոյցներու մէջ: Անկէք ետք վերջն եւ որ, Նախորդի մէջ պատկեր ունեցող անձնապէս հանձնալու, մեծ նուն վիպագիր Տիկին Մարիլէ Սերաօն, ինչպէս գիտեն «Մասիս»ի ընթերցողները: Ինծի համար իմա չիկայ աւելի մեծ հանոյք մը, քան իրարու մօտեցած տեսնալ Նոր Իսպիոյ կանացի ամենեկն կարկառուն երկու այդ դէմքերը եւ զանոնք քարզմանօրէն ներկայացնել մասնաւորապէս մեր ընթերցողներուն:

Ծ. Թ.

ԻՄ ԴՆՇԽՈՒՆ

Որք է քիմիական զօրութիւնը այն հակադէմքը, որ պիտի կրնայ տարրալուծել խորհրդաւոր ու անընդհատ ան ուժը՝ որ կանայքի հմայք կը կոչուի...: Եւ չքեղաշուք վեհապետութիւն մը վրայ ինչ աւելի խորունկ, աւելի բարդ, աւելի անըմբռնելի բան, քան այդ հմայքը ամենագոր:

Այն պատմաբանները, որոնք առաջիկային, Իտալիայի թագութիւն՝ Մարկարիթա տի Սալոնի գովեստը պիտի արձանագրեն, պիտի կրնան երբեք բացատրել բարոյական այն պատճառները, որոնց շնորհիւ ան, այսօր իր Տունին իգական երկարատեւ սերունդին մէջ առաջին տեղը կը գրաւէ և որոնք զինքը ալ աւելի մեծ ու կարկառուն դէմք մը պիտի ընծայեն ապագային մէջ: Ո՛վ պիտի

կրնայ երբեք կնիքն մը ամբողջովին թափանցել: Ո՛վ պիտի կրնայ երբեք ամեն բան գիտնալ ու ըսել Մարկարիթայի պէտքացառիկ կնիքն մը կեանքին վրայ...

Այո՛, իմ դէտն աղուոր է, աղուորն է իմ աղուորն է: Իր զմայլելի խորտեղ մագլերը, որոնց ձեռք գոյնեւելու կը վախնայ իր տարիքը, կը չըմանալեն կուսական ձերմակ դէմք մը որուն գոյնին անախտիղ փայլը, լոյսը կ'առնէ քնէ ու կ'անդրադարձնէ ցոլարձակ: Իր մութ գորշագոյն, անվնաս ու գգուանոյց նայուածքով աչքերը, կը բացայայտեն հոգի մը, որ կը հսկէ, կը տեսնայ, կը գտնէ, և կ'առնէ ամէն ինչ որ վարնոյց է, կը սիրէ ամէն ինչ որ գեղեցիկ է ու վսեմ: Իր բերանը կը ճառագայթէ սիրալի ժպիտի մը, — ներողամտութեան, քաղցրութեան, գորովանքի ժպիտի մը — մէջ: Իր միջին հա-

սակը կը ձգտի աւելի բարձր երեւալու, չընորհիւ իր սթորթական մարզանքներուն, որոնք իր չնորհալի դիւրաթեքութիւնը ու վայելչակերպութիւնը կը շեշտեն ու կը յաւերժացնեն: Աղուորութեանը՝ ըսելիք չիկայ: Բայց այնչափ ուրիշ կիներ, այնչափ ուրիշ թագուհիներ ալ ունեցած են այդ գեղեցկութիւնը՝ որ ոչինչ արդիւնաւոր եղած է իրենց համար իսկ, իրենց չղջանալին համար, իրենց ժողովուրդին համար: Մարկէրիթաի գեղեցկութիւնը ունի, դիմադիմերու անբըծութենէ գեր ի վեր լսան մը, որ ուղղակի հոգիէն կը բղխի...: Այդ գեղեցկութիւնը, հակառակ հրապուրիչ ըլլալուն, սրբանուէր բան մը ունի. հակառակ իրիտասարդական ըլլալուն՝ քաղցրաժպիտ խնայողութեան մը ստուերը կը պահէ իր վրայ: Այդ գեղեցկութիւնը վայելչութիւնով ու պճնանքով ինքզինքը չըջապատելով մէկտեղ, զարդարանքը, չքեղ չըջադեփօտները, փառայեղ գոհարեղէնները, իր արքայական անձնաւորութեան արժանաւոր վերարկունները փնտռելով հանդերձ, ոչինչ ունի թեթեւական կամ հանրային. գերիշխան գեղեցկութիւն մըն է ան, որ բնականաբար կը պճնազարդուի բոլոր այն բաներով զորս իգական արդուզարդը ունի իր արամադրութեան տակ ամենէն աւելի ճշիւ, ու ամենէն աւելի փափկաշնորհ:

Գեղեցկութիւնը ինքնին՝ միօրինակ է, մարդիկ շուտով կը ձանձրանան անկէ և ուրիշ բանի կ'ըլլան հետամուտ:

Բայց, քսան տարիէ, երեսուն տարիէ ի վեր, եղած է երբեք որ ժողովուրդը չի փութայ արքայական բնակարաններուն առջեւ տեսնալու համար Մարկէրիթաին անցնիլը: Ամբողջ միշտ կըստատէ անոր ճամբուն վրայ, ինչու որ անխախտ ու անկեղծ կերպով զարնուած է անոր դէմքին, անոր ժղպիտին, անոր նայուածքին: Երբ Նափօլիի կամ Վէնէձիաի մէջ կիմացուի որ Նորին Վեհափառութիւնը պիտի գայ տասնհինգօրեակ մը անցընել հոն, հրճուանքի բուռն շարժում մը առաջ կուգայ ամէնէն բարձր, ինչպէս նաև ամէնէն խոնարհ դասակարգերուն մէջ: Տարիները սահելու անցնելու վրայ են, հիմա ա'լ առաջուան պէս մանկամարդ չէ, բայց իր

հմայքը անփոփոխ է մնացած միշտ: Մայրիկները իրենց զաւակներուն ձեռքէն բռնելով, տունէն դուրս կ'իյնան և ցնծութիւնով կը գոչեն:

— Եկուր երթանք թագուհին տեսնանք:

Իմ դէտոյին հմայքը, իր ժպիտին մոգականութեանը, իր քալուածքին վեհաշուքութեանը իր դիրքուկացին չնորհալիութեանը մէջ չէ միայն. այլ իմացական ամէն արտայայտութեան առջեւ բայ իր միաքին մէջ, ամէն աղնուական ու մաքուր զգացումներու հասու իր սիրտին մէջ, և իր կորովի հոգիին մէջ՝ որ կը բովանդակէ բոլոր այն բարձրաթիւ առաքինութիւնները, զորս կանացի հոգի մը ունեցած ըլլայ երբեք: Մարկէրիթա տի Սալօեա Հաւատքի տէր է ամէն բանէ աւելի, — բայց ոչ այն հաւատքը որ կուրօքէն կը սահմանափակուի կրօնական պաշտամունքներու կամ ձեւակերպութիւններու արտաքին կատարման անձուկ չըջանալին մէջ, այլ այն լուսամիտ լայնախոհ Հաւատքը, որ մարդկային միտքին ամէնէն բարձր ու գերազանց ձեւերը կընդգրկէ և դէպի իմաստութիւն, բարութիւն, զթութիւն կ'առաջնորդէ: Ան կը հաւատայ և իրաւունք ունի հաւատալու բոլոր այն բաներուն՝ որոնք արդարացի, անկողմնակալ, բարի, գթած են. կը հաւատայ գաղափարներու ու խղճմտանքներու անբըծութեանը. կը հաւատայ իր Տունին մեծութեանը ու փառքին և իրողուն ապագային. և այնչափ պինդ ու խոր կերպով կը հաւատայ բոլոր նուիրական այդ բաներուն որ զինքը չըջապատողները, արքայական ընտանիք, ժողովներ, ժողովուրդ, անոր կը զառնան և զայն կը նկատեն՝ իբր իրենց զրօշակիրը:

Ջերմհաւանգօրէն սիրող բոլոր աղուոր բաներուն, Մարկէրիթա անթերի կերպով կը խօսի չորս լեզու և մօտէն կը ճանչնայ անոնց գրականութիւնները. ֆրանսերէն, անգլիերէն, գերմաներէն և իտալերէն: Լատիներէն ալ գիտէ այնչափ որչափ պէտք է դասական հեղինակները կարդալու համար:

Ամէն առտու ժամը ութէն տասնըմէկ,

իր ժամանակը նուիրուած է ընթրցումի, ինչու որ ինք կըստանայ՝ գիտութիւններու, փիլիսոփայութեան, ընկերաբանութեան, արուեստի, վերջապէս ամէն բանի վրայ ճառող վերջին հրատարակութիւնները։ Վարժապետի գլուխ մը չէ որ կը կրէ ան, այլ շատ մշակուած իմացականութիւն մը։ Երբ մենէ մէկը ունինդրութեան պատիւին կ'արժանանայ, երբ օտարական մը, ըլլայ գրագէտ, գիտուն, կամ բանաստեղծ, Բուրիինայէ կ'երթայ, անոր բանգիրտութեան հանդէպ ապահար կ'ըլլայ ու կը մնայ զմայլուն։ Ձէ՛, ան ինչ որ կարդացեր է, ազէկ է կարդացեր և իր անձնական դատաւարանը յատակ է, հատու ու ինքնայատուկ։ Ինք, արուեստէն, գրականութենէն կամ գիտութենէն, կեանքի յաւէտ գեղեցիկ ներկայացում մը, քաղցր պատրանք մը, վարդապոյն կեղծիք մը չէ որ կ'ակնկալէ, այլ անոր մէջ կը փնտռէ Տեսականին զովացուցիչ ու հովանորդ աղբիւրը և ատանկով արտայայտած կ'ըլլայ հազարաւոր կիներու, անդրադոյնին ծարաւովը առջորդ հազարաւոր հոգիներու բաղձանքը...

Եւ իր լեզուն, իր ժպիտը, իր ներկայութիւնը կը քաջալերեն բոլոր անոնք որոնք աշխատութեան են նուիրուած. այն ամէն սեղուանքը ուր արուեստ ու գիտութիւն կը ծաղկին, ինք հոն է. երաժշտական կամ թատերական բոլոր մեծ հանդիսութիւններուն ներկայ է, ան կը բանայ նկարչական բոլոր ցուցահանդէսները։ Տաղանդը, հանճարը, իմացականութիւնը կ'առինքնեն, կը շահագրգռեն զայն... Մենէ ո՞վ, ըլլայ վիսպասան, նորալիպագիր, գրագէտ, արուեստագէտ, չէ խանդավառած, անոր ներկայութեանը կամ խօսքերուն ի պատիւ։ Մենէ ո՞րը ուշադիր ու հրայրքոտ թագուհիի այդ հագին հետ հաղորդակցութեան մտած առին, չէ զգացած իր մէջը, ապագայ երկի մը կրակի բոցավառիլը։ Բանաստեղծներ ու արձակագիրներ երգած են այդ կինը. գիտուններ ու արուեստագէտներ ազնուական հպարտանքով մը թրթռայած են, ամէն անգամ որ անոր ձայնը եկած է գովեստը կարդալ իրենց զմեզակ աշխատանքին. սկար ու յուսահատ կիներ, որոնց ձեռք կարկառած է ան, նոր ոյժ ստացած ու յաղթած են կեանքի պայքարին մէջ։

Եւ բոլոր այն վարնոց, տգեղ, գռեհիկ բաներուն մէջտեղը, որոնց մէջ կը թապալուկի խաւական կեանքը, — ինչպէս բոլոր նորատի ազգերուն կեանքը, — Մարկէրիթա կը ներկայացնէ, Իմացականութեան յաղթանակը, ձեւի ու գաղափարի Գեղեցկութեան յաղթանակը։

Թագուհին ամէն տարի մենութեան պէտքը կը զգայ։ Շատոնց ի վեր է որ, լեռնաւայրը իր բարձրադիր կացութիւնով, իր լուակաց հանդարտութիւնով ու անապակ միջնորոտով կը յանկուցանէ զայն. ան կը թողու բոլոր աշխարհիկ պերճանքը և պարզօրէն հագած ալպեան զրօսաշրջիկներու գորշգոյն հագուստը, կ'երթայ հանգչիլ կրէսօնէի քաղցր ու զով հովիտին մէջ, որուն վրայ կ'իշխէ Մօնթէ Ռօզաի պատկառաղիւ ճերմակ դանդուածը։ Հոն, մէկ յարկով սիրուն տունիկ մը ունի ան, մարգարետիններով ու Ալպեաններու յետին ծառերուն փունջերովը չըջապատուած։ Հանգարտիկ ու ինքնամոլի կեանք մը կը վարէ հոն։

Իր պզտիկ արքունիքը կը բնակի կրէսօնէ գիւղաքաղաքին մէջ որ մօտաւորապէս հազար բնակիչ ունի և ինք թագուհին, միակ պատուակալ տիկինն մը և երկու սպասաւորի հետ կ'ապրի այդ պզտիկ միայնակ տունին մէջ որ Villa de Peccoz կը կոչուի։

Յուլիսի առաջին կիսամօթին, հոն հասնելուն պէս, երկիրին նկարագեղ տարազը կը հագնի. կարմիր վտառակ, երկներանգ ատենապորձուած սև պարեգօտ, սև մետաքսէ դոգնոց, ծաղկազարդ թաշկինակ վիզին շուրջը, գլուխին վրայ քօղ մը՝ վախճանակ օսկեժանեակ գլխանոցի որ քիչ մը պուռա է և զոր սովորաբար կիրակի օրերը կը գնեն տեղին կնիկները։

Հոն, մարդ չընդունիր, չի տեսնար. միայն մինակ է, ազատ է, հանգիստ է։ Կը կարդայ, կ'երազէ, միշտ միայնակ, միշտ անվերջ ու անկաշկանդ։ Կիրակի օրը, պզտիկ համեստ մատուռին մէջ պատարագ տեսնալու կ'երթայ և ամէն մարդ իր ետեւէն հոն կը փութայ թագուհիին պատարագին ներկայ ըլլալու համար։ Վերջը, ժամուն դուրսը, քանի մը ճամբորդ կիներ կը ժողվուին, ա-

նոր ելլալուն սպասելու համար. և ան կ'ելլայ դուրս ու գեղջկական պղտիկ այդ հրապարակին վրայ հաճոյակատար կ'երպով մը կը խօսի մէկին, միւսին հետ... Յետոյ կը քաշուի իր բնակարանը կ'երթայ:

Իր ալպեանական պտոյտները, հեռաւոր զրօսարչաւները, իր քաջարի ամբարձումները անմատոյց գազաթներուն վրայ, մատի վրայ չէ որ կարելի է համբել այլ ևս: Ան կը պաշտէ ցրտին ու լոճիկ այդ լեռները Ալպեան, այդ սեպածե սրահները, վտանգալից այդ ուղիները. այդ յաւիտենական սառնարանները, թեթեւ ու ջինջ այդ օդը, և այդ բարձունքները՝ որոնք զինքը երկինքին կը մօտեցնեն: Յետոյ, նորէն կ'իջնայ ու կ'երթայ իր պղտիկ անակը ուր նորէն կը թաղուի ինքնամոխոխումի մէջ, պշայեցումի մէջ, ինքզինքին ունկնդրող ու միայնութեան մէջ կապուելու հոգիի մը վսեմ հանգիստին մէջ:

Նս ինքս ալ, հոն՝ * * Մօնթէ Ռօդալի մօտ, կրէսօնէյի համեստիկ պանդոկին մէջ ամբողջ եղանակ մը անցուցած եմ: Այդ պանդոկը քանի մը մէթր միայն հեռու է Villa Peccozէն ուր կը բնակի թագուհին:

Քանի՞ քանի՞ անգամներ այդ վիլլային առջեւն անցած ատենս, ընդհամարած եմ նուրբ ու խոհուն դէմք մը և չեմ համարձակած բարեւել իմ դշխոն, վախնալով իր սխրալի պշայեցումը խռովել... Քանի՞ քանի՞ անգամներ, խոր գիշերին մէջ, երբ պանդոկին հիւրերը երազներու մէջ կ'օրօրուէին անդորր, և ես գրեւոր զբաղած էի դեռ, լսած եմ՝ դողդոջ ձայնը դաշնակի մը ղոր թեթեւաչարժ մասներ կը հպանցնեն... դանդաղ, սքօղիկ, արամաթախիժ երաժշտութիւն մը որ կը հոսի հնչուն ստեղնաշարին վրայ յոյլ ու յամբարար յամեցող ձեռքերէ՝ որոնք կարծես իրենք իսկ կըղզային, կը խորհէին, կանրջէին... Եւ, այսպէս, խաւարին ու ընդհանուր լռութեան մէջ, կըղզայի որ, այդ նուազ ներդաշնակութենէն կը ծորէր ու կը ծաւալէր իմ դշխոյն սերս խոհանքը ու անուշ անրջանքը:

ՄԱՅԻՆԷ ՍԷՐԱՍ

Թարգմ. ԶԻՅԹԷ-ՍԱՐԱՅ.

ՅՐԱՆՍ. ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԼԵՈՆ ՏԸ ԹԵՆՍՈՅ

LEON DE TINSEAU

ՃԱՄԲՐՈՂՈՒԹԵԱՆ ՅԻՇԱՏԱԿՆԵՐ

Բ.

Սիմս շողենաւին մէջ էր որ ճանչցայ կոմս ար Թէնսոն:

Մեր մեկնումին հետեւեալ առաւօտը, հաղիւ արչալոյսը ծագած էր, երբ արթնցայ ու խուցիս պղտիկ պատուհանէն տեսնելով որ կանանչաւէտ եղերքի մը մօտէն կ'անցնէինք, շուտով սարաւանդը ելայ տեսարանը չփախցնելու համար: Տարտանելի ներուցը հասած էինք. աջ ու ձախ երկու գեղալոււարձ ափեր զմեզ կը սեղմէին կարծես. ոչ մէկ տուն կ'երեւէր անոնց վրայ, հեռուէ հեռու կիսափուլ դղեակ մը կամ հին՝ պարիսպներու աւերակներ, ահագին անասուններու պէս, կանանչութեան մէջ կը կանգնէին: Երկնքին մէջ կուտակուած թուխ թուխ ամպերը, ծովուն գորշագոյն ալիքները, չրջակայ լռութիւնը և արչալոյսին դեռ աղօտ լոյսը տեսարանին տարօրինակ արտաթիւն մը կուտային: Կի՞ն հով մը կը փչէր: Ոչ ոք կար սարաւանդին վրայ առաւօտեան այդ կանուխ ժամուն, բաց ի միջահասակ, գիրուկ, կարմրերես, յիսուն—յիսունընիւթ տարեկան մարդէ մը որ ծխափող մը բերանը և հայելի մը ձեռքը՝ հեռուն կը դիտէր: Դլուխը սեւ մորթակ մը ունէր և հագած էր տալածոյէ վարդագոյն տաբատ մը և լայն դեղին կօշիկներ:

Անշուշտ, մոռածցի, ուղեկիցս գործէ քաշուած վաճառական մը կամ յանձնակատար մըն է. և որովհետեւ շողենաւը ովսած էր նուազ արագ ընթանալ, ուղեկիցիս դառնալով ատոր պատճառը հարցուցի:

—Մեծաւորի շողենաւները հոս մէկ երկու ժամ կանգ կ'առնեն, ըսաւ, վաճառք բեռնելու համար:

Ուղեկցիս հնչումէն հասկցայ թէ գաղ-
ղիացի էր, ուստի քաջաբերուեցայ յարելու:

—Այդչափ ստոյգ տեղեկութիւն ունենա-
լու համար՝ այս տեղէն ուրիշ անգամ եւս
անցած ըլլալու էք:

—Օ՛, անշուշտ, պատասխանեց անծա-
նօթը, քանի՛ քանի՛ անգամներ Արեւելք ե-
կած եմ, բայց երբեք չեմ յագենար այս տե-
սարանը դիտելէ: Ահա անգամ մըն ալ զայն
տեսնելու նպատակաւ՝ արշալոյսը կանխեցի:

Այս ըսելէ վերջ, վերսկսաւ դիտել իր
առջեւ պարզուող տեսարանը:

Ա՛լ հիմայ շողեկաւ անշարժ էր և նա-
ւակներու, մակոյկներու տորմիզ մը չըջա-
պատած էր զայն: Նաւաղները՝ ցորենով, ա-
լիւրով լեցուն պարկերը վեր կ'առնէին, կ'ի-
ջեցնէին, կը պարպէին. ու այս ամէնը լե-
ղուներու խառնուրդի մը և թոհ ու բոհի
մը մէջ:

Տեսնելով որ շողեկաւ մեկնումին դեռ
մէկ—երկու ժամ կար, քաղաքավար ու-
ղեկցիս «ցտեսութիւն» ըսելէ վերջ սենեակս
իջայ:

Նոյն օրը, իրիկուան դէմ, լուր տա-
րածուեցաւ թէ երեւելի վիսպագիր մը, Լէոն
տը Թէնսոյ, շողեկաւ մէջն էր: Դիւրին է
երեւակայել այսպիսի լուրի մը առաջ բերած
յուզմունքը և հետաքրքրութիւնը:

Իմ առաջին զգացումս զարմացում եղաւ
և երկորդը՝ սաստիկ բերկրութիւն մը: Ի՜նչ,
մօտէն պիտի ճանչնայի հոչակաւոր հեղինակ
մը, պիտի խօսէի վիպագրի մը հետ որուն
հաճոյքով կարգացած վէպերէս, չդիտեմ ին-
չո՛ւ, համոզուած էի թէ երկսասարդ է. վեր-
ջապէս պիտի տեսակցէի մարդու մը հետ
զոր դպրոցականի բորբոքած երեւակայու-
թիւնս միւս մարդերէն բոլորովին տարբեր
կը պատկերացնէր ինծի:

Որքան ճիշդ է թէ հաճոյք մը կատարե-
լապէս ըմբոշխնելու համար պէտք է որ
զգայնութիւնն ալ կատարելապէս կոյս ըլլայ,
եթէ նոյն դէպքը հիմայ պատահէր, որչափ
քիչ պիտի յուզուէի, և սակայն տակաւին
որչափ քիչ ապրած և զգացած եմ:

Շողեկաւին սարաւանդը ելայ, նայուած-
քըս աջ ու ձախ պատուցի, անկասկած թէ

երեւելի գրագէտը լուի իր կերպարանքէն պիտի
գուշակեմ: Զանքս ընդունայն եղաւ և ոչ
մէկ տեղ հիացմանս և գրագէտի իտէպիս
արժանի անձ մը չտեսայ, թէպէտ ամէն տա-
րիքէ, ամէն աղգէ և ամէն տիպարէ մար-
դիկ կային հոն:

Վերջապէս ճամբորդներէն մէկուն հար-
ցուցի.

—Իրա՞ւ է թէ կոմս տը Թէնսոյ շողեկա-
ւին մէջն է:

—Ահա՛, պատասխանեց ուղեկիցս, քանի
մը փրկիններու հետ խօսելու զբաղած է:

Կ'ըսեն թէ անոնք որ Մետուսի գլուխը
կը տեսնէին, անմիջապէս կը քարանային:
Ես ալ եթէ չէի քարացած, գէթ քարի չափ
անշարժ կը կենայի զարմանքէս՝ տեսնելով
որ աւաւտեան տպածոյէ տաքատ հագած
տարիքոտ պարզ մահկանացուն և փափկա-
խօս, վայելչաբոն, հոչակաւոր գրագէտ
Լէոն տը Թէնսոյ միեւնոյն անձն էին:

Սակայն այլ եւս տպածոյէ տաքատը վա-
յելուչ գորշագոյն completi մը տեղի տուած
էր. իսկ գլուխը բաց էր, և աչքին մէկը
միակնոց (monocle) մը կը կրէր: Անբաժա-
նելի ծխափողը մատներուն մէջ բռնած էր և
մերթ ընդ մերթ չրթունքներուն տանելով
մուխի ամպ մը դէպի երկինք կը բարձրացը-
նէր: Պարզ ու ընտանի կերպով կը խօսէր,
բայց այդ պարզութեան ու ընտանութեան
կը միանար խիստ նուրբ քաղաքավարու-
թիւն մը որ ազնուականը մատնանիչ կ'ընէր:

Անոնք որ ճամբորդած են, գիտեն թէ
բարեկամութեան կապերը որչա՛փ շուտ կը
հիւսուին ուղեկիցներու միջև: Շարունակ
միասին ապրուած այ՛, մէկ քանի օրուան
կեանքը աւելի կը մտերմացնէ քան բազ-
մամեայ բարեկամութիւնը: Թերեւս նոյն
վտանգներուն ենթակայ ըլլալու գիտակցու-
թիւնն է որ համերաշխութեան զգացումը
ճամբորդներուն մէջ աւելի կ'ամրապնդէ:
Այնպէս որ այդ համերաշխութիւնը տակաւ
առ տակաւ բարեկամութեան կը փոխուի:

Եթէ այս դիտողութիւնը ճիշդ է ընդհա-
նուր առմամբ, որչափ իրաւ է Լէոն տը
Թէնսոյի մասին որ ընկերսիրութեան ոգին կը

կրէր իր մէջ: Պստիկ թէ մեծ ամէնուն հետ նոյն հետաքրքրութեամբ կը խօսէր և ամէնուն խօսակցութեանց մէջ մեծ հաճոյք զըտնել կը թուէր: Չգիտեմ թէ ո՞րն է աւելի հիանալին, իր պարզութիւնը թէ նրբամտութիւնը: Իր պարզութիւնը բնական համեստութենէ մը ծնունդ կ'առնէր:

Այս բարեմասնութիւնը այդպիսի անձի մը քով՝ կրկին արժէք ունէր: Չայն չճանչցողը երբեք չպիտի գուշակէր թէ երեսուն հատորներու հեղինակի մը հետ կը խօսի: Ինքը՝ ծննդեամբ աղնուական, սրտով ու միտքով ալ աղնուական ծնած է:

Մեր մէջ գրագէտներ կան որ մէկ քանի երես արձակ կամ ոտանաւոր գրած ըլլալուն համար, Ողբակական հովեր կ'առնեն, հասարակ մահկանացուներու հետ խօսելու հազիւ կը զիջանին և եթէ այդ չնորհքն իսկ ընեն՝ վճռական բանաձեւեր կը գործածեն և ոչ միայն ընդդիմախօսութեան չեն հանդուրժեր, այլ զայն իբր նախատինք կը նկատեն: Երբ հոշակաւոր վիպագրին հետ կը խօսէի, ակամայ անոնց վրայ կը մտածէի:

Լէոն աը Թէնսոյի նրբամտութիւնը, ինչպէս իր գիրքերուն մէջ, խօսակցութեանը մէջ ալ ի յայտ կուգար: Գիտէր ամենառամիկ բացատրութիւնները աղնուացընելու դժուար արուեստը:

Իր խօսակցութիւնը խիստ համեղ էր և ճամբորդութեան երկար ժամերն ալ անոր շուրջը անդալաբար կը սահէին:

Խօսակցութեան արուեստը դժուար արուեստ մըն է որուն փափուկ և բարձր հաճոյքը միայն զարգացած մտքերու մատչելի է: Բայց անիկա կրկին հաճոյք կ'ընծայէ անոնց որ մեր համայնքին մէջ ապրելով՝ ցանցաւ կերպով զայն ճաշակելու առիթն ունին, զի դժբախտաբար այդ ազնիւ զուարճութիւնը մեր մէջ դեռ փոքրամասնութեան մը միայն ծանօթ է:

Երբ Իզմիր հասանք, գրեթէ բոլոր ճամբորդները յամաք ելան, քաղաքը տեսնելու համար. մէկը աջ, միւսը ձախ, ամէնքը մէյմէկ կողմ ցրուեցան: Քարափը և շուկան այցելելէ ետք, ծովեզերեայ սրճարան մը դա-

ցինք նստանք: Հոն անակնկալ մը կըսպասէր մեզի. Լէոն աը Թէնսոյ թիկնաթոռի մը մէջ ընկողմանած էր ու կլկլակ մ'առջեւը՝ ծխանի պէս կը մխացէր:

— Ահա՛, ըսաւ խնդալով, կատարեալ Արեւելցի մը՝ եղայ:

Ժամ մը վերջ ուղեւորներուն մեծ մասը Սիւսի մէջ համախմբուած էր վերստին:

Շոգենաւին բարձրեզրին կրթնած՝ հեռուն կը դիտէի: Իրիկունը՝ սիրուած կնոջ մը դէմքին պէս մեղմիկ էր, արեւուն ճառագայթները քաղաքը համակ լոյսի մէջ կ'ողողէին: Հեռուն, Փակոս լեռան վրայ բերդերու աւերակներ թաւշական շուքի մը մէջ կը մարէին: Երկայնածաւալ քարափին ձախ կողմը սղտիկ երկաթուղի մը փոշելից ճամբուն վրայ օղակ օղակ օձի պէս առաջ կ'ընթանար: Կապոյտ երկինքին մէջ մանր մուկներ ամպեր բամպակի կոյտերու նման տեղ տեղ կարծես կախուած կը կենային:

Այս գիւթիչ տեսարանին առջև հայեցողութեան մէջ ընկղմած էի, երբ աչքերս դարձնելով Կոմս աը Թէնսոն տեսայ որ սքանչելի թուզերով լեցուն մեծ կողով մը ձեռքը, շոգենաւին սանդուխներէն վեր կ'ելլէր:

— Ժամ մը փնտուեցի, ասոնք գտնելու համար, ըսաւ:

— Եթէ մէկ քանի օր հոս մնայիք, թուզին գինը պիտի բարձրանար, պատասխանեցի խնդալով:

Սակայն շատ մը ճամբորդներ ալ Իզմիրէ շոգենաւ նստան, ի մէջ այլոց յոյն ընտանիք մը որ կը բաղկանար հօրմէն, մօրմէն, որդիէ և աղջիկէ մը: Օրիորդը հաղիւ 19—20 տարեկան՝ բարձրահասակ և գեղադէմ աղջիկ մըն էր:

Ճակաճն՝ յուսնին պէս ռոզազարդ

Այսերը՝ ծիլ ծիլ վառ ի վարդ:

Ընտանիքին կ'ընկերակցէր թուխ երիտասարդ մը, ջղուտ և մօրուանի, որ փաստաբան էր և միանգամայն գրագէտ: Ասոնք օրն ի բուն երկայնաթոռներու վրայ փռուած՝ նորագոյն վէպերը կը լափէին անյադաբար:

Իրենց կարգացած վէպերուն հեղինակներէն մէկին ուղեկից ըլլալին անշուշտ առա-

ջին օրերը չէին գիտեր, բայց լուրը հետըզհետէ Զմիւռնարնակ ճամբորդներուն մէջ ևս տարածուեցաւ։ Օր մը նաւուն վերելքը նրատած կը խօսէինք, երբ յանկարծ յոյն փատարանը վիպադրին մօտենալով հարցուց։

—Կոմս տը Թէնսոյի խօսելու պատին ունիմ արդեօք։

—Այո՛։

—Այդ պարագային, տիկիններուն չնորհաւորութիւնները ձեզի կը հաղորդեմ։

Եւ սկսան խօսակցիլ։ Երբ քառորդէ մը մեր մէջ վերադարձաւ վիպասանը, ըսաւ։

—Այդ պարոնը կատարեալ interviewի մը ենթարկեց զիս։

Ի՞նչ interviewն շատ կատարեալ եղած ըլլալու էր, զի երբ երկու ամիս յետոյ անուանի գրագէտին այցելութեան գալիս, ցցուց ինծի յունարէն օրաթերթ մը և հանդէս մը որոնց մէջ փաստաբանը վիպագրին գովեստն ընելով, զայն իր ընթերցողներուն կը ճանչցընէր։ Այդ երկու յօդուածները իզմիր վերադարձին գրած և իրեն ուղղած էր։

Լէոն տը Թէնսոյի նրբամտութիւնը ամէնէն աւելի սեղանի սլահուն ի յայտ կուգար։ Լաւ սեղանի սիրահար մըն էր և երբ խնամուած անուշեղէն մ'ըլլար, ա'լ ամենազուլթ մարդը կը դառնար։ Սեղանը՝ երկու զուարճալի անձեր ունէր զիմացը. մէկը սրամիտ Թրանսուհի մը, և միւսը պաշտօնատար մը որոնք իր ամէն ըսածներուն պատասխան մը կը հասցնէին։ Ա'լ մանրալէպերը, բառախաղերը, կատակները, լիայորդ կը տեղային։ Ինքը որ նաւորդներուն ամենախօսուններէն մէկն էր, ամենաշարժունն ալ էր։

Երբ արտառուց կ'ործիքներ կը յայտնէի, երկու բազուկները դէպ ի երկինք կը բարձրացնէր, գլուխը կուռ կը ծռէր, շրթունքը մէկ մէկու կփելով, այնպէս որ իր ամբողջ իրանին յանկարծական շարժմամբ միապակեայ ակնոյցը ստէպ կ'իյնար, բայց անմիջապէս նորէն տեղը հաստատելով, խօսակցութիւնը կը շարունակէր։ Անգամ մը սեղանակից Բարիդուհին չարածծի կերպով մը ըսաւ։

—Պարոն տը Թէնսոյ, չիտակը կ'ուզէ՞ք, միակնոց դորձածողներուն կարծատեսութեանը շատ հաւատ չեմ ընծայեր։

—Գիտեմ, պատասխանեց վիպասանը ժպտելով, կարճատեսութիւնս արուեստակեալ կը կարծէք, բայց ճշմարիտ է։ Եթէ պարզ ակնոց չեմ դնէր, պատճառն այն է թէ քիթիս վերիդին այնչափ տափակ է որ երբեք հոն ակնոց մը չեմ կրցած դետեղել։

Այս պատասխանը ընդհանուր քրքիչ մը յարոյց։ Ուրիշ իրիկուն մը խօսքը Պոլսոյ հնութեանց վրայ դարձաւ։ Իւրաքանչիւր ոք իր տեսածները կը յիշատակէր։—Ես, ըսաւ Լէոն տը Թէնսոյ, Պոլսոյ պարիսպներէն դուրս պզտիկ բայց հինօրեայ յոյն եկեղեցի մը տեսայ որ զիս շատ հետաքրքրեց։ Շէնքին ճակատին վրայ չրջանակի ձեւով սա խօսքերը կային որոնց իսկատիպութիւնը երկու հակառակ կողմանէ ալ նոյն եղանակաւ կարդացուիլն է։ Եւ առնելով ճաշացուցակ մը, յունարէն պարբերութիւնը ետեւը գրեց որ իւրօք թէ՛ սկիզբէն և թէ՛ վերջաւորութեան նոյն կերպով կը կարդացուի և կը նշանակէ։ «Յրեսդ միայն մի՛ լուար, ալ հոգիդ ալ»։ Յետոյ խօսքը ինծի ուղղելով.—Անշուշտ տեսած էք այդ եկեղեցին, ըսաւ։—Եւ ժրխտական պատասխանիս վրայ.—Ահա՛, գոչեց, Արեւելցիները, երկու թեւերը վեր բարձրացընելով ըստ իր սովորութեան, ահա՛ Արեւելցիները, իրենց քթին տակ եղող հնութիւնները չեն երթար տեսնել և մենք հաղարաւոր մղոններէ հեռու զանոնք այցելելու կուգանք։

Ես կը ջանայի ինքզինքս արդարացընել, բայց Բարիդցի երիտասարդ մը ընդմիջեց.— «Կը հաւատա՞ք եթէ ըսեմ թէ ես ալ սակաւին Մատէն եկեղեցին չեմ այցելած»։

Եւ որովհետեւ յաղթական ժպտով մը վիպադրին երեսը կը նայէի.—Ասիկայ կ'ապացուցանէ թէ, պատասխանեց խնդալով, Բարիդցի մը կընայ Արեւելցի մ'ըլլալ, ինչոր մինչև հիմայ աշխարհագէտները չէին գիտեր։

Բան մը կայ որ անխուսափելի է. երբ դեղեցիկ կին մը և գրագէտ մը զիրար ճանչնան ու մանաւանդ ստէպ տեսնուին, կինը իր պիւրանքն ի դործ կը դնէ անոր ուշը գըրաւելու համար և գրագէտը՝ եթէ քիչ մը քծնող է կամ կնասէր, անոր բանաստեղծու-

թիւն մը կը ձօնէ: Ուստի ըլլալիքը եղաւ...

Լէոն տը Թէնսոյ շոգեհաւին մէջ գտնուող երկու գեղանի օրիորդներուն մէջ մէկ քերթուած գրեց: Նախ միայն մէկին համար, սակայն յետոյ միւսը լսելով թէ իր մրցակիցը — զի ամէն կին ուրիշ կնոջ մը մրցակից է — այսպիսի նախապատուութեան արժանացեր է, թախանձանօք խնդրեց որ իրեն ալ գէթ երկտող մը ձօնէ: Կոմս տը Թէնսոյ խիստ հուսաւ հոգեբան մըն է, բայց չուզեց անսալ հոգեբանութեան կարեւոր աշխատանքին որ նախանձը կնոջ բնաւորութեան գլխաւոր կիրքը կը համարի: Հազիւ օրիորդներէն մէկին նուիրած էր իր քերթուածը, երբ միւսը վրայ հասաւ ու կէս — կատակերգական կէս — ողբերգական ձեւով մը ըսաւ գրագէտին:

— Սաստիկ զայրացած ու վշտացած եմ, ինծի ոտանաւորներ կ'ուղղէք, բայց գրական կարողութիւնս փորձի ղենելու համար անոնց պատասխան կը պահանջէք. յետոյ օրիորդ «Ք»ին եւս բանաստեղծութիւն մը կը ձօնէք: Ի՞նչ արժէք կ'ունենան ձեր ոտանաւորները, եթէ ամէնուն այսպէս շռայլէք:

«Լաւագոյն բաժին»ին նրբամիտ հեղինակը խնդալով պատասխանեց.

— Բայց նախանձութեան կատարեալ կռիւ մըն է այս: Ասոր ընաւ չէի սպասեր, օ՛րհաւ: Մարտէյլէն շոգեհաւ նստայ քիչ մը հանգիստ ընելու մտքով: Ինքնիրենս կ'ըսէի. շոգեհաւին մէջ կին չկայ, ուստի և վէճ ալ չկայ: Ու մէջ մըն ալ դո՛ւք վրայ կը հասնիք, նախանձու կռիւ մըն է կըսկսիք:

Յետոյ յարեց.

— Իրաւ է, նախանձոտ էք եղեր, բայց ես այդպիսի բնաւորութիւնները կը պաշտեմ:

Մինչ այս մինչ այն, ճամբորդութեան զուսճալի օրերն արագ արագ կ'անցնէին, ու այդ շարժութեան մը կարճ ժամանակամիջոցը փոխադարձ համակրանաց այնպիսի զգացում մը առթած էր որ երբ մեր ուղեւորութեան նպատակադէտին հասանք, ամէնուն ճակտին վրայէն տխրութեան ստուեր մը անցաւ: Աւա՛ղ, պէտք էր բաժնուիլ, այլ եւս երբեք չտեսնելու համար զիրար, պէտք էր ողջերթի յետին բաւերն արտասանել:

— Անպատճառ ձեզ կը սպասեմ, ըսաւ Կոմս տը Թէնսոյ, մեկնելու պահուն: Ահա հասցէս:

— Շնորհակալ եմ, պատասխանեցի, կը խոստանամ գալու:

Երկու ամիս ետքը խոստումս կը կատարէի: Գարնանային լուսաւոր օր մըն էր. Բարիդի Վիէն փողոցին appartementներուն մէկէն ներս մտնելով դռնապանին հարցուցի. «Կոմս տը Թէնսոյ ո՞ր յարկը կը բնակի»: — Երրորդը, պատասխանեց մարդը: Երրորդ յարկին զանգակը ցնցեցի:

Աղախին մը դուռը բացաւ:

— Պարոն Կոմսը հո՞ս է:

— Չգիտեմ, պատասխանեց կինը:

Այն ատեն «կեցի՛ր այցեւորմաս տամ», յարեցի: Վայրկեան մը ետքը, եկաւ զիս ներս առաջնորդել: Վիպասանը սեմին վրայ կ'ընկաւ ու մինչ ես կրկնոցս կը հանէի.

— Ա՛լ ձեզ տեսնելու յոյսը կարած էի, ըսաւ:

Եւ երբ այցելութեանս յապաղման իրր արդարացում, Յուլիանդէսը, Թանգարանները եւայլն կը պատճառաբանէի.

— Իրաւ է, աւելցուց, Բարիդի մէջ մարդս ապրիլը զգալու ժամանակ չի գտներ...

Գրագէտին սենեակը, իր երեւոյթին պէս պարզ էր. ո՛չ մէկ գիրք կը նշմարուէր հոն. գրասեղանը թուղթերով միայն ողողուած էր: Բաղի փետուրներ՝ կաղամարին քով՝ վիրաբոյժի մը գործիքներուն պէս շարուած կըսպասէին: Քովէ քով նամակներու երկու կոյտ կը նշմարուէին. հաւանաբար արդէն պատասխանուած և պատասխանուելիք նամակներն էին: Ամէն անկիւնները Պուստոյի պղտիկ արձաններով լեցուն էին. այս տեսարանը, անշուշտ անհուն բերկրանք պիտի պատճառէր Նիւլճայի անմուտց երգիչ Տէմիրճիպաշեանին, եթէ իմ տեղս գտնուէր: Պատերուն վրայ բազմաթիւ կենդանագիրներ կը տեսնուէին, ինքնագիր ձօներով: Անոնց մէջ կը նշմարուէին երեւելի գրագէտներ, գեղադէմ կիներ, սիրուն բարիզուհիներ և արեւելցի պերճաւոր տիկին մը: Ինքը թիկնաթոռին մէջ բազմած, անոնց անունները կուտար ինծի: Երկարօրէն խօսակցեցանք, ամէն նիւթի

քիչ մը դպչելով և արդէն ամէն նիւթ զինքը կը հետաքրքրէր :

— Ձեր հին մատենագրութիւնը ճոխ ըլլալու է, կ'ըսէր :

Ես ալ կարելի եղածին չափ իր հետաքրքրութեանը գոհացում տուի : Երբ իրեն իմացուցի թէ իր վէպերէն մէկը հայերէնի թարգմանուած էր, ուրախութենէն՝ նստած տեղէն վեր ցատկեց և աղաչեց որ այդ թարգմանութիւնն իրեն ղրկեմ, ինչ որ սիրայօժար խոստացայ :

Խօսակցութեան առաջին յորձանքը քիչ մը կանգ առնելէ վերջ, մեծանուն բարեկամս ըսաւ .

— Ձեզի պիտի հրամցընեմ բան մը զոր Բարիդի մէջ զանեղնուդ պիտի զարմանաք, այն է թրքական սուրճը որուն պատրաստութիւնը ես սորվեցուցած եմ աղախնիս :

Քառորդ մը ետքը կը ճաշակէի Լէոն աղթէնսոյի սուրճը որ Պոլսական սուրճէն բնաւ տարբերութիւն չունէր :

Շնորհաւորանքս յայտնեցի տանտիրոջը որ պատասխանեց .

— Հիմայ ձեզի ուրիշ զարմանալի բան մըն ալ պիտի ցուցնեմ. հաճեցէք ինձի հետեւիլ :

Ու զիս տարաւ իր սեղանաստունը :

Նոյն պարզութիւնը հոն ալ կը տիրէր. քառակուսի սեղան մը մէջտեղը, որուն վրայ առաստաղէն կախուած պղնձէ լամպար մը, դարաններու մէջ արծաթ սպասներ, ասոնք էին սենեակին կարասիները, որ իր պարզութեանը մէջ խիստ վայելուչ և ճաշակաւոր էր :

— Ահա, ըսաւ հիւրընկալս, այդ զարմանալի բաները, և մատուցելու պատէն կախուած քանի մը լուսանկարներ ցոյց կուտար. ա՛յս էջմիածնի վանք, է, Դուք Վանայ լիճն է. և զարմանքս դէմքիս վրայ նշմարելով, սկսաւ խնդալ . — Ձարմանալու Ի՞նչ կայ, ըսաւ ասոնք այն կողմերը ճամբորդութիւններէս բերած եմ :

Սակայն այցելութիւնս կ'երկարէր. հրաժեշտի ժամանակը հասած էր .

— Մնաք բարով չեմ ըսեր, այլ ցտեսութիւն, վի կամ դուք Բարիդ կը վերադառնաք մէկ քանի տարիէն կամ ես Պոլիս կուգամ, ըսաւ վրպագիրը :

Երկու օր ետքը կը մեկնէի Բարիդէն, միառին տանելով թանկագին բարեկամութիւն մը և ակոթեցի յիշատակներու փունջ մը :

Երեք տարիներ անցան անկէ ի վեր, բայց մեծանուն դրագէտը երբեք չթերացաւ իր բարեկամութեան զգացումներուն մէջ : Ես Բարիդ չվերադարձայ, բայց ինքը վերջերս տասներորդ անգամ ըլլալով Պոլիս եկաւ և երկու շաբաթ իր հաճելի ընկերութիւնը վերըստին վայելեցի այն ափանց վրայ :

Ուր Վոսփորի դարեւանդներ

Ծաղկապսակ եւ միօք դալար

Թանգան յալիս զիբեց պահէր :

ԳՐԻԴՈՐ ԲՈՒԼՃԵԱՆ

ՆՈՒԱՂԱԾ ԱՅՆՆԵՐ

(Ս Ի Ր Ե Ր Գ)

... Մէկէն նըւաղած էր ձայնն այն գիշեր Առուին որ հեռուէն՝ հովտին խորերէն, իր վիշտը կուլար մելամաղձօրէն : Մէկէն նըւաղած էր ձայնն այն գիշեր :

Հեւքոտ մրմունջ մը իր ձայնն հեռաւոր, Մութ գիշերներու խորհուրդօն օծուած, Որ սրտիս ցաւին կը խօսէր շատ ցած : Հեւքոտ մրմունջ մը իր ձայնն հեռաւոր :

Լեռներու լըռին ձանձրոյթն անանուն, Մըռայլ ամպերուն արցունքն յոգնաբեկ, Բազէին ճախրանքն ու կոշը բեկբեկ. Ու ցաւած սրտիս թաղծոտ կոծն անհուն,

Իր գորշ ջուրերուն կը խառնէր առուն եւ հանդարտօրէն, հեզիկ զընացքով, Մերթ տաղնապալոյզ ու մերթ անխըռով, Ծոյլ ծրփանքներով կը սահէր հեռուն :

Ինչպէ՞ս մարած էր խարոյկն այն գիշեր... Իր սիրոյն հոսկ կայծն՝ իմ հէք սրտիս տակ, եւ ինչպէ՞ս դադրած էր ձայնն իր յստակ. Հոգիս յուզելէ, աւաղ, չեմ յիշեր...

Վ.Յ.Գ.Գ.Ի.Ս

ԳԻՏԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

ՌԱԴԻՈՄ
(RADIUM)

Պ. Է. Տիկին Գիւրի, Մ. Հ. Պեգրեյ, Կեմ սագրական նօթեր. — Պեգրեյեան ճառագայթներ. — Իւրանիոմ, քորիոմ, աֆիւնիոմ բոլորնում Է. ռադիոմ. — ռադիոմի պատրաստութիւնը. — Ռադիոմի յատկութիւնները. — Անոթ. օգտակարութիւնը. — Գիւրիներուն վարձատրութիւնը:

Ռադիոմ: — Այս է այն հրաշագործ տարրը, զոր գտան երկու տարասեւ բնագէտներ՝ Պ. Է. Տիկին Գիւրի՝ իրենց անխոնջ աշխատութեան ու յարատեւ ուսումնասիրութեանց շնորհիւ: Անիրաւութիւն մը պիտի ըլլար սակայն, հոս, Գիւրիներուն անունին չկցել Պ. Հանրի Պէգրեյի անունը, որ նախակարգ պետք եղաւ Ռադիոմի գտնուելուն: Պ. Բիէռ Գիւրի, Սոսպոնի մէջ, ինչպէս նաեւ Ecole municipale de physique et de chimie մէջ բնագիտութեան ուսուցիչ էր. իր կինը, Տիկին Գիւրի, բնիկ Բոլոնիացի է՝ Վարչաւիոյ մէջ ծնած. իր մականունն էր Սքլոտովըսքա. Բարիզ կուգայ իբր ուսանողուհի և իր արտակարգ իմացականութեամբ քիչ ատենէն licencié վկայական կը ստանայ. իր ուսուցիչներուն մէջ կը գտնուէր նաեւ Պ. Բիէռ Գիւրի, որ յետոյ իր ամուսինը կ'ըլլայ: Ինչ ժամանակէն, Տիկին Գիւրի, շարունակելէ յետոյ իր ուսումը, կըստանայ Տօքթորի(*) վկայական և միեւնոյն ատեն ուսուցչուհի կը կարգուի Ecole Normale Supérieure մէջ՝ հոն քիմիագիտութիւն ուսուցանելու համար, ըստ որում այդ էր Տիկինին նախասիրած ձիւղը: Ինչ նշանուած վիճակի մէջ, սկսած էին Գիւրիները ուշադրութիւն հրաւիրել իրենց վրայ Ecole municipale քիմիական աշխատանոցին մէջ՝ անդադար փորձեր կատարելով:

Իսկով Պ. Հանրի Պէգրեյի, սա թո՛ւն է նշանաւոր բնագէտ Սեզար Պէգրեյի. իր

(*) Docteur ès sciences

հայրն է էամոն Պէգրեյ, որ անդամ էր՝ իր որդւոյն պէս՝ Էնսթրիթիւն: Հանրի Պէգրեյ անդամ էր նաեւ Գիտական Ակադեմիային, ուսուցիչ՝ Բազմարուեստեան վարժարանին և բնական գիտութեանց Միւղէտմին մէջ:

1896ին էր. Հանրի Պէգրեյ, իր կատարած փորձերուն իբր արդիւնք ցոյց կուտար գիտական աշխարհին թէ, Իւրանիոմ կոչուած մետաղը ինքնաբոլոր ճառագայթներ կ'արձակէր, որոնք շատ կը նմանէին Ռէնթգենի ճառագայթներուն, և կ'ազդէին լուսանկարչական փափներու վրայ. օդը եւ լեկտրականութեան լաւ հաղորդիչ կ'ընէին. սեւ թուղթէն կ'անցնէին ու մետաղական բարակ թերթերէն ներս կը թափանցէին. սովորական լուսոյ ճառագայթներուն պէս չէին ցոլանար ու չէին ալ բեկեցկեր: Պէգրեյ գիտած էր որ Իւրանիոմը, իր արձակած լոյսը ու է տեսանելի ազդրէ մը փոխ չէր առնէր, ինչպէս աղամանող ևն. ու ամէնէն առաջ ինքը գոհ մնաց այս յաջողութենէն ու կոչեց այդ ճառագայթները Պէգրեյեան ճառագայթներ (rayons de Becquerel): Ասկէ վերջէն էր որ thorium (թորիոմ) անուն մետաղին վրայ ալ տեսնուեցան նոյն այն յատկութիւնները. զոր ունէր Ռադիոմը, թէ և կիւսթալ Լըպոն կ'ենթադրէր թէ թորիոմ՝ լոյսէն ամբարած իր ցոլացումներն է որ կը ճառագայթէ:

Իւրանիոմը և թորիոմը կը հանէին բէքպլէնտ (peckblende) կոչուած հանածոյէն. Պ. Է. Տիկին Գիւրի նկատելով որ այս հանածոյէն ելլող վերոյիշեալ երկու մարմիններուն մէջ արձանցումն յատկութիւն մը կայ, խորհեցան թէ նոյն այդ հանածոյին մէջ պէտք էր գտնուի ուրիշ տարրեր մարմին մըն ալ զոր աւելի զօրաւոր կ'ենթադրէին առջի երկու տարրերէն: Գործնական փորձեր սկսան կատարուիլ Գիւրիի հսկողութեան սակ, ըստ որում ինք էր աշխատանոցին փորձերուն պետը, և ուղղակի բէքպլէնտը ենթարկելով իրենց աշխատութեանց՝ գտան արդարեւ, իրենց ենթադրած մարմինը՝ Ռադիոմը, և ասկէ զատ բոլորնումը: Տարի մը վերջը

Պ. Տըպլէնն գտաւ Աքթինիում (actinium) ըստած տարրն ալ որով ճառագայթ արձակող քիմիական տարրերուն թիւը հասաւ հինգի, առաջնութեան իրաւունքը միշտ Ռատիոմին մնալու պայմանաւ:

Ճառագայթարձակման այս յատկութիւնը կոչուեցաւ ճառագայթազդեցութիւն (radio-activité) և մարմիններն ալ ճառագայթազդու (radioactif):

Ռատիումը, որուն համար ըսի թէ ամէնէն զօրաւորն է, իւրանիումի արձակած ճառագայթներուն 2 միլիոն անգամը կ'արտացոլայ:

Բաղմածախս, երկարատե ու չափազանց դժուար գործողութիւն մըն է Ռատիումի հանման գործողութիւնը բէքպլէնտի հանածոյէն, որ առ այժմ հաղուագիւտ ըսուելու չափ քիչ կը գտնուի, ըստ որում 10 թօնո բէքպլէնտի հանածոյի միացորդ(*), 5 թօնո քիմիական տարրեր բաղադրութիւններ և 50 թօնո լըւացքի ջուր պէտք տեսնուած է Մէկ կրամ Ռատիումի ժաննուկ կամ քլորակ (chlorure ou bromure de Radium) ստանալ կարենալու համար: Թողունք որ, մինչև ցարդ երեք տէսիկրամ զուտ Ռատիումի ժաննուկ կրցած են ստանալ և զանազան փորձեր ընելով տիեզերահռչակ անուանել Ռատիումը: Երեւակայելու է թէ ի՞նչ սոսկալի յեղաշրջում առաջ պիտի դայ գիտական աշխարհին մէջ, եթէ փոխանակ ասանկ աննշան քանակութեան՝ սովորական քիմիական բաղադրութիւններու պէս մեծ քանակութեամբ Ռատիում հանել յաջողին:

Ռատիումին սղութեան պատճառը բէքպլէնտի հանածոյին ցարդ քիչ տեղեր գտնուելն է. Շուէտի, Սիպերիոյ, Պոնտիոյ և Ամերիկայի Միացեալ Նահանգաց մէջ տեսնուած է այս հանածոն ու այս և ուրիշ պատճառներով, զոր քիչ մը վերը թուեցի, Մէկ կ'ըսէ Ռատիումը մինչև 150,000 ֆրանք գնահատած են: «Ռատիում» անուն ֆրանսերէն հանդէսը որուն առաջին թիւը ունիւմ աչքիս տակ, և որ հրատարակուիլ սկսած է 1904 յունուար ամիսէն, հրաւէր կը կարգայ իր բոլոր ըն-

թերցողներուն, որպէս զի ուր որ պատահին հանածոյի մը, որուն մէջ Ռատիումի գոյութիւնը հաւանական նկատեն, զրկեն իր հասցէին այդ հանածոյին մէկ նմոյշը՝ տարրալուծուելու և այսպէսով բէքպլէնտի գոյութիւնը ընդհանրացած տեսնելու համար բոլոր աշխարհի մէջ:

Ռատիումը ցարդ կարելի եղած չէ մետաղական վիճակի վերածելու. ասկէ դատ, իր աղերն ալ մաքրուած ու զտուած չեն. տեղի ունեցած փորձերը քառամագէս կը կատարուին Ռատիումի քլորուիդ և կամ ժաննուկով: Պ. Գիլբի Ռատիումը դասած է, (alcalino-terreux) կալաքարայիններու կարգը. և անոր հիւլէական կշիռ նշանակած է 225, ըստ որում չափազանց կարծր է:

Ռատիումի աղերը մշտնջենաւոր աղբիւրներ են պէզըռէլեան ճառագայթներու: Իրենց արտացոլումը ամենեւին ազդեցութիւն չեն կրեր -250° և $+100^{\circ}$ աստիճաններու մէջ: Ռատիումի ճառագայթները սովորական լոյսին պէս չեն ցոլանար և չեն բեկակիր. հայելիին մէջէն կը թափանցեն կ'անցնին. ելեկտրականացած երկու մարմիններու մէջտեղը գտնուող հեղուկ մարմինները (diélectriques liquides), օրինակի համար հեղուկ օդը, պէնզինը, վաղէլինի իւղը, բէթրոլը՝ ռատիումի միջոցաւ լաւ հալորդիչ կ'ըլլան ելեկտրականութեան համար: Բնագիտական աշխատանոցի մը մէջ ալ կարելի է ելեկտրական մէկուսացած ու է գործիք պահել Ռատիումի ներկայութեանը, վասն զի իր միջոցաւ գործիքը կըսկսի դործել: Ելեկտրականութեամբ լեցուած ելեկտրոսքոր մը, ուժգին կը պարպուի Ռատիումի հպումով: Իւրանիումը, բոլոնիումը, աքթինիումը և թորիումը մինչև 3 - 4 սանթիմէթր հեռուն կ'արձակէին իրենց ճառագայթները. Ռատիումի արձակած ցոլքերը սակայն, մինչև մէկ մէթր հեռուն կը ցոլանան: Դիտուած է որ Ռատիումի ու է մէկ աղը, որքան զտուած մաքրուած ըլլայ քիմիապէս, անոր գործունէութեան աստիճանը այնքան կը մեծնայ: Պ. Ա. Տէքս (A. Despaux) Revue roseի յունուարի թիւին մէջ լուրջ ուսումնասիրութեան մը առարկայ

(*) Բէքպլէնտի հանածոյ, որմէ արդէն հանուած է իւրանիումը:

կ'ընէ Radioactivitéի մէջ դռնուած ազդեցութեան ուժը, ուր մէջ բերելով Կիւսթալ Լըպօնի այս մասին ըրած յայտարարութիւնը կ'ըսէ թէ. «Այս ճառագայթները սովորական լուսոյ ճառագայթներուն հետ բնաւ նմանութիւն չունին, զի չեն ցոլանար և չեն բեկբեկեր: Այս յատկութիւնները խառնուրդ մըն են մազնիսականութեան ելեկտրականութեան, քաթոտական և Ք. ճառագայթներու. և արտաքուլացած ճառագայթները հեռուն զըտնուող մարմնոյն վրայ կ'ազդեն՝ մազնիսականութեան և ելեկտրականութեան պէս»:

Ռատիոմի ցումունքները ապակին տեւական կերպով մը մանիշակադոյնի կը դունաւորեն. բօրսըլէնը, թուղթը, կերակուրի աղը և բոլոր alcalins մարմինները իրենց գոյնը կը փոխեն ռատիոմի միջոցաւ: Թթուածինը ողոնի կը փոխէ և սպիտակ լուսածինը (phosphore) կարմիր լուսածնի:

Ռատիոմի ճառագայթները ուժգնապէս կ'ազդեն մորթին վրայ: Ռատիոմ պարունակող քառչուէ քսակ մը, եթէ քանի մը ժամ շարունակ մորթին վրայ դրուի, ուժգին բորբոքում մը յառաջ կը բերէ, և զայն դարմանելու համար 8 օրէն մինչև 3 շաբաթ պէտք կ'ըլլայ. կրնայ նոյն իսկ վէրք մը (ulcération) գոյացնել որ մէկուկէս ամիսէն կրնայ առողջանալ:


La Nature գիտական հանդէսը կը պատմէ թէ Տոքթ. Տանլուս, Սէն-Լուի հիւանդանոցին մէջ յաջողութեամբ դարմանած է Lupus ըսուած «գայլցաւ»ը իր տեսակներովը. բան մը՝ որ անյաջողութեան մատնած էր լուսադարմանումը (photothérapie): Լոնտոնի մէջ Տոքթ. Մաքէնզի—Տալլիստըն չրթունքի մակերեւոյթային քաղցկեղ մը դարմանած է. Վիէնայի մէջ Լեզուի և քիմիքի քաղցկեղ մը առողջացուցած են: Գալով Ռատիոմի բնախօսական ազդեցութեան, Պ. Տանիձ, Էնսթիթիւ Բասթէօրէն, դիտած է որ Ռատիոմ պարունակող խողովակ մը եթէ մուկի մը ողնայարին վրայ դրուի, կենդանին քանի մը օրէն կ'անդամալուծուի և վերջապէս կը մեռնի ջղակծկումներով: Պ. Տանիձ իր փորձը ամենախիտքը կենդանիներէն սկսած և աստիճանաբար մեծ կենդանիներու վրայ փորձած է նոյն արդիւնքին հասնելով և հետեւեցուցած է որ եթէ մարդուն վրայ ալ փորձուի, մահը անխուսափելի կ'ըլլայ:

Ահաւասիկ այս նորագիւտ տարրին յատկութիւնները, որքան որ կրցանք ներկայացնել Մասիսի ընթերցողներուն. իրաւամբ արժա-

նացան անոնց դաիչները Նոպէլի, Օսիրիսի եւն. դրամական մրցանակներուն և Լոնտոնի Société royaleի կողմէ իրենց նուիրուած Տէյլիի մէտայլին, որ ամենաբարձր վարձատրութիւնն է եւ պսակումը իրենց այն աշխատութիւններուն, որոնք կոչուած են մարդկութեան ճակատագիրը փոխելու:

ՆՈՒՊԱՐ

ՔՐՔՐՈՒՄՆԵՐ



Մութ երկինքին
Պէս է հոգին,
Ուր յաւիտեան
Կը սարսըռան
Երազներուն
Իսկ շողողուն.
Ձերթ ասուսներ
Երբեմն ի վեր
Կը խոյանան,
Հիր, դիւթական
Ակօսներով՝
Ամպերուն քով:
Եւ յամբերբ
Այդ ձիւն ամպեր,
Որ կը հակին
Շուրջը հետքին,
Իզձե՛րն են մեր
Անքի՛ժ յոյզեր,
Որոնց կաթ ձիւ
Կ'երանդուի հիր.
Թեթեւ, ծրփուն
Գանգուրներուն,
Դըգուել փութայ
Երբ հեռակայ
Լեռներէն՝ զով
Յըրտահար, հով,
Կը ցըրցըքնին
Սեղմ խոսրոսին.
Կամ, բըռնալար
Հովէն ալ, վար
Կը քամուի ցօղ
Ամպէն լացող:
Կոյս անայայլ
Մեր իզձերն ալ՝
—Ամպի՛ գալար—
Չեն մերձենար
Եզըր թրթռուն
Անուրջներուն,
Եւ յաւիտեան
Հոնտեղ կուլան ...:

Բերա

ԱՇՈՏ Բ. ԲԵՉԵԱՆ

ԽՄԱՐԱԳՐԱԿԱՆ ՆՈՐԾԵՐ

Մայր Աթոռի գործեր. — Ս. Պատրիարքը երեքշաբթի, Կրօն. Ժողովին առաջ, եկեղեցական ծանօթ խնդիրներուն վրայ խորհրդակցութիւն մը կատարեց Տ. Բարթողիմէոս, Տ. Գրիգորիս, Տ. Վահրամ, Տ. Հմայեակ, Տ. Դէորդ, Տ. Լեզիկ և Տ. Գաբրիէլ Սրբազաններուն հետ, և տեղեկութիւն տուաւ Մայր Աթոռի գործերուն վրայ, փոխանակուած թղթակցութիւններուն համեմատ, և խնդրոյ նիւթ եղան նաև Պատրիարքական չրջաբերականին մէջ յիշուած կէտերը: Ներկայ եպիսկոպոսներն յետոյ այցելութիւն տուին Տ. Մեսրոպ արքեպիսկ ի որ հիւանդութեան պատճառով չէր կրցած Պատրիարքարան գտնուիլ նոյն օրը: — Սառն Ժողովի չորեքշաբթի օրուան նիստին մէջ ալ Ս. Պատրիարքը ինչ ինչ տեղեկութիւններ հաղորդեց Մայր Աթոռի եկեղեցական գործոց վիճակին եւ այն դանադան տնօրինութեանց ու միջոցներուն վրայ որոնք ի գործ դրուած էին վերջերս:

Երուսաղեմի խնդրոյն վրայ խորհրդակցութիւններ կատարուեցան Սառն Ժողովին մէջ, և Ս. Նախագահին յանձնուեցաւ նախապէս տրուած որոշմանց գործադրութեան փութացումը: Պատրիարքարանի կողմէն ընդարձակ տեղեկագիր մը պատրաստուելով, Դատական գործոց Բարձր. Նախարարին մատուցուած է:

Մահերու շարք մը ծանուցանելու տխուր հարկին մէջ զտնուեցան օրաթերթերը վերջին օրերն: — Տ. Կոմիտաս քահանայ Սպեան շաբթուսկիցը վախճանեցաւ ծեր հասակի մէջ, և օծման ու յուղարկաւորութեան հանդէսը կատարուեցաւ Տ. Հմայեակ Սրբազանի նախագահութեամբ, Բերայի Ս. Երրորդութիւն կեղեցին: Հանգուցեալը հեղահամբոյր ու սիրուած քահանայ մըն էր, որ պահ մըն ալ վարեց Բարիզի հայ գաղութին հոգեւոր հովուութիւնը: Իր աշխտահանութեանը ուսուցիչ եղած էր Նարեկան վարժարանին մէջ որուն այդ թուականի աշակերտներուն վրայ

լաւ յիշատակներ թողուցած է: — Ազգ. Հիւանդանոցի մէջ իր հոգին աւանդեց Մինաս էֆ. Սիսեան, Բերայի Թաղ. Խորհուրդի օգնական քարտուղարը, նախկին չրջանաւարտ Շահազարեան վարժարանի և երբեմն ուսուցիչ: — Կարճատեւ հիւանդութենէ մը վերջ մեռաւ նաև Գառնիկ էֆ. Համբարձումեան, երբեմն անդամ Բաղ. Ժողովի:

Տոբ Ն. Տաղաւարեան թղթակից անդամ ընարուեր է Բարիզի Աստուղադիտական ընկերութեան, ինչ որ արժանաւոր գնահատում մըն է Երիտասարդ բժիշկին գիտական ուսումնասիրութեանց և երկասիրութեանց:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ԻԻՆԻՍՏԻ ԲՆԴՆ. Տնօրէն Սիմօն էֆ. Գայսէրեան իր Տիկնոջ հետ Բարիզ ուղևորեցաւ: Նոյն ընկերութեան կեանքի ձևովն տեսուչ Միհրան էֆ. Տէր Ներսէսեան, որ մօտակայ դաւառները գացած էր ապահովագրական գործերով, մայրաքաղաքս վերադարձաւ:

ՎԻՔԹՕՐԻԱ ՏԸ ՊԵՐԼԷՆ կեանքի ապահովագրական ընկերութիւնը որուն Թուրքիոյ Բնդն. Տնօրէնն է Միհրան էֆ. Ս. Գալֆայեան, իր գործառնութիւնները ընդարձակելու վրայ ըլլալով Կ. Պոլսոյ և դաւառներու մէջ, տեսուչի պաշտօնին կոչուած է Յարութիւն էֆ. Մ. Քէչէճեան, ապահովագրական գործերու վարժ, պարկեշտ ու ժիր երիտասարդը, որ գոհունակութիւն միայն պատճառած է իր նախապէս ծառայած ընկերութեան ու անոր Կեդր. Տնօրէնութենէն միտալով մըն ալ պատուած է: Հրատարակած է նաև, ինչպէս կը յիշուի, շահեկան գրքոյլ մը՝ ապահովագրութեանց վրայ: Տարակոյս չունինք որ այս փորձ պաշտօնեան ընկերութեան գործառնութեանց մէջ կարեւոր օժանդակ մը պիտի ըլլայ Միհրան էֆ. Ս. Գալֆայեանի որ այնքա՛ն պատուաւորապէս ու արժանաւորապէս կը ներկայացնէ «Վիքթօրիա տը Պէրլէն»ը:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

Դեռ շատ ատեն չկայ որ Եւրոպա սկսած էր «դեղին վտանգ»ի ուրուականէն երկիւղ զգալ: Բայց 1894ի Չինեւճարոն պատերազմը կարծել տուաւ թէ եղջերուաքաղ մըն էր լոկ այդ երկիւղը, զի 400 միլիոննոց ահա-դին զանգուած մը կազմող Չինը փշրուեցաւ իրմէ տասն անգամ աւելի փոքր եղող Ճա-բոնէն: Սակայն անոնք որ Չինու պարտու-թեամբը «դեղին վտանգ»ը անհետացած հա-մարեցին, մոռցան թէ անոր յաղթական ճա-բոնն ալ դեղին ցեղէն էր, որ թէպէտ իր փոքրութեան պատճառովը դեռ արժէքը եր-եւան չեղած խորհրդաւոր Չին հսկային չափ ահաւոր չէր, սակայն կրնար որ մը այնքան զօրանալ որ եթէ ոչ ընդհանուր Եւրոպայի՝ դէթ անոր մէկ կամ միւս տէրութեանը սպառ-նալ, և կամ միջազգային ընդհանուր քա-ղաքականութեան մէջ իր ոյժը այնպէս գոր-ծածել որ զգալի ընել տար թէ բոլորովին անհետացած չէ դեղին ցեղէն կասկածուած վտանգը: Իսկ եթէ իր ցեղակցութեամբը, կրօնակցութեամբը, լեզուի և բարուց գրեթէ նոյնութեամբը, ինչպէս և դրացնութեան և շահակից բարեհաճակամութեան շնորհիւր կա-րողանայ այնպէս վաստկել Չինու համակ-րութիւնը և վստահութիւնը որ անիկա իրեն բարոյական, տնտեսական և քաղաքական ազդեցութեանը տակ մտնէ ու ճակատագիրը իր ձեռքը յանձնէ, ինչ ահարկու ոյժ մը չըլլար:

Անշուշտ ասիկա աղէկ կը տեսնեն ամէն ա-նոնք որ կը գիտեն այժմ թէ Ճաբոն ինչպէս բռնած է 140 միլիոն բնակիչ ունեցող Ռու-սիոյ օձիքը ամիսներէ ի վեր և չթողուր դայն մինչև որ կամ համակերպեցնէ իր պահանջում-ներուն և կամ պատերազմի ստիպէ ինչ քնա-կան է որ եթէ Ռուսիա այլապէս մտածէր, հիմա շատոնց նախայարձակ եղած էր անոր դէմ, զի ուս գիւնանադիտութեան մէջ օ-րինակը չիկայ այսքան տատամսելու, երբ յաղթութեանը վրայ վստահ եղեր է: Ըսել է որ առանց բոլոր դեղին ցեղը կամ Չինու

վիթխարի զանգուածը իր ձեռքն ունենալու, արդէն իսկ Ճաբոն կարող եղած է Ռուսիոյ զդացնել տալու թէ «դեղին վտանգ»ը չէ անցած, դէթ անոր համար:

Եւ ինչ է այդ «դեղին վտանգ»ը ստեղծը, եթէ ոչ պարզապէս այն երկիւղը թէ մի՛ գուցէ ծայրագոյն Արեւելքը նորէն շարժի որ մը Արեւմուտքի դէմ և դայն ահաբեկէ, ինչպէս մարդկային տարեգրութիւնները ցոյց կուտան թէ պատմական շրջանը սկսելէն ի վեր քանի մը դարը անգամ մը պատահած է ծայրագոյն Արեւելքի յարձակումը Արեւմուտ-քի վրայ և նմանած է Ովկիանոսի մակընթա-ցութեան և տեղատուութեան, իւրաքանչիւր յառաջխաղացում ունեցած է իր նահանջը և երբեմն ետեւէն բերած է նաև հակառակ շարժումը:

Ռուսները թէպէտ չվախնան Ճաբոնի ուղ-ղակի մէկ յարձակումէն, բայց վերջա-պէս կը տեսնեն թէ ճիշդ ա՛յն ատեն որ իրենք Մ. Արեւելքէն առաջանալով Ասիոյ ծայրը կը հասնէին ու Ովկիանոսի եզերքը կը բռնէին, ահա՛ Մայրագոյն Արեւելեան հեռագոյն մէկ կէտէն պատգամի ձեւով ի-րենց հրաման մը կ'արձակուի Միքատոյի կող-մէ, նորածագ արեգական երկրագագու վե-հապետէն, թէ «Ետ դարձի՛ր, այսպիսի մի՛ յառաջանալ»: Եթէ Մոսկովեան միմանձնու-թիւնը համակերպի այս պատգամին, իր ազ-դեցութիւնը սոսկալի հարուած մը կը կրէ. իսկ եթէ կարեւորութիւն չի տալով մերժէ, պատ-ճառ պիտի ըլլայ պատերազմի մը որուն ելքը իրեն համար եթէ ոչ բոլորովին վտանգաւոր, դոնէ անստոյգ և երկիւղալից է: Հապա եթէ պատերազմը երկու տէրութեանց միջև սահ-մանափակուած չմնայ ու աւելի մեծ համե-մատութիւններ ստանալով, ծաւալի նաև իւ-րաքանչիւրի դաշնակիցներուն և անոնց ալ զինակիցներուն միջև, այն ատեն դիւրին է կուսել թէ Մայրագոյն Արեւելքի խնդիրը որքա՛ն աւելի ծաւալուն և ծանրակշիռ հան-դամանք մը կրնայ ստանալ:

Մ. ՆԱԹԱՆԵԱՆ

Արսովսկի Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

Տպագրութիւն ԱՐԵՎԵԼԻՔ Օրագրի



ՌՕՍԻԱ - ROSSIA



ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԻՆՆԻ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱԾՔ

1881 մարտ 20ի Կայս. Ուժազուով արտօնուած

Կեդրոնատեղին Բեդերսպուրկ, իրեն յատուկ շէնքը:

Ընկերութիւնը խիստ նպաստաւոր պայմաններով ապահովագրութիւններ կ'ընդունի ԿԵԱՆՔԻ վրայ, եւ ՀՐԻՆՆԻ, ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ ՎՏԱՆԴՆԵՐՈՒ, ԱՄԷՆ ՏԵՍԱԿԱՐԿԱԾՆԵՐՈՒ ԴԷՄ, ցկեանս ապահովագրութիւն ՇՈԳԵԿԱՌՔՈՎ եւ ՇՈԳԵՆԱԻՈՎ ՈՒՂԵԻՈՐՈՒԹԵԱՆ ԱՐԿԱԾՆԵՐՈՒՆ ԴԷՄ, ինչպէս նաեւ ՀԱՅԵԼԻՆԵՐՈՒ եւ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ ԿՈՒՐՈՆԵՆ ԴԷՄ:

Ընկերութեան դրամադուլութը, ամբողջապէս վճարուած

10,666,667 ֆրանք

Երաշխաւորութեան գումար աւելի քան

137,300,000 »

Ընկերութեան ապահովագրութեան վճարուած դրամա-

դուլիս եւ վնասուց հատուցում

282,000,000 »

1902 տարւոյ մէջ գանձուած ապահովագրին եւ տուցս

54,000,000 »

Ամէն տեսակ տեղեկութեանց համար դիմել Կ. Պոլսոյ մասնաճիւղին, Ազարեան խան, Վոյվոտա, Ղալաթիա:

ՍՐՄԱՔԷՇԻ ԶՈՒՐ

(ՊԵՅՔՕԶ)

ԱԽՈՐԺԱՀԱՄ, ԹԵԹԵՒ ՈՒ ՕԳՏԱԿԱՐ

Սոյն հանրածանօթ աղբիւրին ջուրը, ախորժանիստ եւ վճիտ, յանձնարարուած է մայրաքաղաքի ականաւոր բժիշկներուն կողմէ, որոնք անձամբ փորձած են անոր յատկութիւնները: Մասնաւորապէս, քիմիագէտ Պ. Բիէռ Արէոի տարրաւումած է զայն եւ Թաշաէլէնի ու Գանլըգաւաքի ջուրերէն գերազանցապէս լաւագոյն դասած է, ստուգելով որ անոր ջրաչափական աստիճանը 1° է եւ բնաւ ստամոքսի ծանրութիւն չիտար:

Տեղական հիւանդանոցներէն շատեր, իրենց 'բժշկապետներուն յանձնարարուած Թեաւը, այս ջուրը կը գործածեն, որ ուղղակի աղբիւրէն կը բերուի ամենայն խնամքով եւ մաքրութեամբ, չիչերը ու տակառները հոն լեցուելով ու զմտուելով:

ՍՐՄԱՔԷՇ ԶՈՒՐին գերընտիր ու անմրցելի ըլլալը հաստատած են նաեւ, քիմիագէտ Տօքթ. Մաննիէզատ, հետեւեալ բժիշկները.

Տօքթ. Տօքա փաշա (ընդհ. քննիչ առողջապահական վարչութեան) Կապուչի, Զէրրի, Սթէքո լի. Ավիլիանօ, Մալլի, Միրապէլ, Բանայօթ պէյ, Պալիտիս, Բարաքօվօքի, Բլէմօվ, Մօրթման, Տէլլասուտա Ֆայօգ փաշա եւ Սիմօնօֆ:

Վաճառման կեդրոնատեղիներն են՝ ԲԵՐԱ, ՄԵՃ-Փողոց, Հալէպ Խան, Թ. 7:— ՊՈԼԻՍ, Սիրքէնի. Պապը-Ալիի մեծ պողոտային վրայ, Թ. 34 մթերանոցը, ինչպէս նաեւ Շուկային Նուրի Օսմանիէի դրան կից Թ. 31 խանութը:

Սոյն մթերանոցներուն մէջ կը վաճառուի նաեւ, ՍՐՄԱՔԷՇ ջուրէն զատ, Բարաքօվաքի ջուր: Գիները շատ ավելի են՝ ժողովրդեան դիւրամատչելի ըլլալու համար:

Փորձի համար չիչ մը գնեցէք ՍՐՄԱՔԷՇի ջուրէն, եւ այնքան համով ու թեթեւ պիտի դանէք, որ վստահաբար պիտի գործածէք զայն առանհետ:


Հ Ա Ճ Ի Մ Ա Ր Ի Մ

ՕՍՄԱՆԵԱՆ ՇԱՔԱՐԱԳՈՐԾ ԲԵՐԱՅԻ

Սոյն հանրածանոթ շաքարավաճառը՝ Բերայի շիտակ ճամբան, թիւ 54, իր խանութը ընդարձակած ու ճոխացուցած է, թէ՛ իբրեւ քաթիսըռի եւ թէ՛ իբրեւ շաքարավաճառ, աւելի գոհ ձգելու համար իր բաղմաթիւ յաճախորդները: Ամբողջ եղանակին մէջ, համեղ պաղպաղակներու պէսպիսութիւն մը կայ ցորեկ եւ գիշեր:

ՀԱՅԻ ՄԱՐԻՄ Օսմ. շաքարագործը ճոխ մթերք մը ունի հարսանեկան շաքարեղէններու, ընտիր տեսակէ, ու մասնաւորապէս յանձն կ'առնէ հարսանեկան հանդէսներու առթիւ ո'չմիայն անոնց հայթայթումը՝ այլ նաեւ մատուցումը եւ սպասարկութիւնը տուներու մէջ:

Միակ մասնաճիւղ, Ղալաթիա. Թօփհըլար շատտէսի, Թ. 101:



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, քայց էական կէտն է լաւ մեքենայ մը սենենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է: Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ր

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱՆԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ձեռքի, ոտի ու ոտի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը զանուխն:

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն աւելի կատարելագործուածը, հաստատունը եւ դիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ՝ ամէն ոք Սինկէրի մեքենաները կը դնէ:

Սինկէրի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկէր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ՇԱՔԱՐԱՎԱՅԻ
ՄԱՍՆԱՎՃԱՐՈՒՄԵՆԵՐ

ԲԵՐԱ

1. Մեծ փողոց, Պօն Մառչէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին:
2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ:

ԿԱԼԱԹԱ

1. Սինկէր խան, Թիւնէլին ետեւը:
2. Դարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ:

ՊԱԼԻՍ

1. Սուլթան Համամ, Թ.
2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. 13:

ՍԿԻՏԱՐ

Չարը Պօյու, Թ. 120:

Դասերը եւ նորոգութիւնք ձեռք:

Կատարեալ երաշխաւորութիւն:

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ:

Սինկէրի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղօղլուի տունը:

ՖԵՆԻՔՍ ՕԹՐԻՇԻԷՆ

ԿԱՅՍ. ԹԱԴ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐ. ԸՆԿ.

Հրդեհի եւ կեանքի (ի վիճեննա)

ՊԱՏՈՒԱԿԱԼ ՆԱԽԱԳԻՍՀ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ն. Ա. Բ. ԴՈՒՔՍ ԱՌԻՏ ԶԸ ՊԱՎԻԷՌ

ԼԱ ԷՍԹՐԵՅԵԱ

Ապահովագր. ԸՆԿ. ընդդէմ հրդեհի եւ ծովային արկածներու (ի ՄԱՏՐԻՏ)

Ապահովագրութիւնք կը կատարուին լաւագոյն պայմաններով:

Սոյն ընկերութեանց Դրամատունն է ի Կ. Պոլիս, Գոքսի Լիօնե

Ընդհ. եւ լիազօր ներկայացուցիչ թուրքիոյ

Գ. ՅԵՐԱՅԵԱՆ

Դրասենեակ, Պոլիս, Հանօբուլօ խան, Թ. 52—53—54—55—56

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ՌԵՐԱ ՄԵՆԻ ՓՈԳՂՈՅ ԹԻՒ 200

Կալաթա-Սէրայի Լիսէին Գ՝ մ

ԳԵ. ԵՇ. ՇԲ. օրերը առաւօտեան կանու-

խեն մինչեւ իրիկուան ժ. 11 1/2

ԲԵ. ԳԵ. ՈՒՐ. օրերը ճէն մինչեւ 11 1/2

Իրսիկի օրերը ժամայրո. բեամբ

ՋՄՐԱՆ ԱՌԹԻԻ

Գնեցէք Կ. ՆԱՎՐՈՒԵԱՆ եւ Յ. ԻՍԱ-
ԴՈՒԼԵԱՆԻ՝ Չինաստանէն, Հնդկաստանէն,
Ճաւայէն եւ Սէյլանէն ուղղակի բերել տուած
բարձ, հոտաւեհ եւ առողջաբար թէյերէն,
որոնք ձերան եղանակին յարմարագոյն ըմ-
պելիննի:

Միշտ ուշադրութիւն մեր
վաճառանիչին:

Կ. Պոլիս, Պահէ Գափու,
Ճէլալ պէյ խան, թիւ 10:

Մասնաճիւղեր թուրքիոյ
գլխաւոր քաղաքներուն մէջ,
նոյնպէս Եգիպտոս:



ՏՕԲ. Ն. ՏԱՂԱԽԱՐԵԱՆԻ ԴՈՐՇԵՐԶ

դր.:

Դիտական շարժում	Բ. տարի (188)	20
» » »	Գ. » (1887)	20
Բնական Պատմութիւն Ա. հատոր (Կեդ.		
Հիւսուածաբանութիւն եւ Մարդկային		
Կազմախօսութիւն ու Բնախօսութ. Դա-		
սագիրք երկրորդական վարժարանաց	40	
Նախորդին համառօտը. Դասագիրք Նա-		
խակրթարանաց	8	
Մագուլմն հայ տառից (Պատկեալ Իզմիր-		
եանց մրցանակաւ)	10	
Մանրէաբանութիւն	10	
Տիեզերք եւ իւր կազմութիւնը (Յրանա)	10	
Առողջապահութիւն	25	
Մանրական Դործարանք (Կազմախօսու-		
թիւն, Բնախօսութիւն եւ Առողջապահութ.	6	
Մարդկային Սաղմնախօսութիւն	5	
Բառացուցակ Ախտանուանց, Բ. Տիպ.	3	
Տարուինականութիւն, Գ. Տիպ.	3	

Կեդրոնաւեղին է

Մատենական Տպարան, Ֆինանսըլար, Կ. Պոլիս

ՐՈՒՄԷԼԻ ԵՐԿԱԹՈՒՂԻՒ ՎԻՃԱԿԱՆՈՒԹԻՒՆ

204ԴԴ ՎԻՃԱԿԱՆՈՒԹԻՒՆ — I ՓԵՏՐՈՒԱՐ 1904

Նումբր	Ֆրանկ	Նումբր	Ֆրանկ	Նումբր	Ֆրանկ	Նումբր	Ֆրանկ
647027	300000	66612	1250	1326522	1000	286652	1000
959922	25000	609929	»	985486	»	1183929	»
1247792	10000	433648	»	131830	»	1769965	»
703243	»	1486899	»	1857874	»	1207613	»
1665380	2000	144359	»	972168	»	1331339	»
1187503	»	402061	»	1055974	»	1522094	»
802543	»	684571	»	1326525	»	128917	»
189563	»	138953	»	1026693	»	1870436	»
958773	»	165216	»	592106	»	138427	»
587143	»	1032955	1000	1381014	»	1482124	»
1508920	1250	957098	»	1026691	»	812348	»
647276	»	1488462	»	40482	»		
1164984	»	1455444	»	1603707	»		

800 ԱՄՕՐԹԻ ՇԱՀՈՂ ԹԻԻԵՐ

25596—600	385936—40	761696—700	1078556—60	1482121—5
34421—5	394436—40	764341—5	1081306—10	1486896—900
40481—5	407836—40	770711—5	1083566—70	1488461—5
55161—5	402062—5	776796—800	1115121—5	1497241—5
58541—5	415941—5	784021—5	1145681—5	1508916—20
66611—5	416796—800	795091—5	1146226—30	1512326—30
77851—5	419151—5	802541—5	1154941—5	1513426—30
92091—5	419531—5	812346—50	1164981—5	1522091—5
95641—5	432286—90	814936—40	1168321—5	1559286—90
108916—20	433646—50	837331—5	1171246—50	1576211—5
114836—40	462766—70	864046—50	1182401—5	1603706—10
121691—5	464531—5	866336—40	1183926—30	1610546—50
123121—5	506461—5	875451—5	1187501—5	1631011—5
131706—10	509516—20	888771—5	1207617—20	1635556—60
131826—30	524276—80	889191—5	1246541—5	1639066—70
138426—30	570006—10	939366—70	1247791—5	1661226—30
138951—5	579846—50	952181—5	1254631—5	1665376—80
144356—60	587141—5	954911—5	1255316—20	1722581—5
144646—50	592107—10	957096—100	1271191—5	1728501—5
151041—5	596896—900	958771—5	1275766—70	1754076—80
154016—20	597481—5	959921—5	1293726—30	1769961—5
153836—40	609926—30	972166—70	1312451—5	1776056—60
165217—20	623991—5	975951—5	1326521—5	1785776—80
189561—5	629091—5	980611—5	1330781—5	1796266—70
261251—5	633256—60	985487—90	1331336—40	1800431—5
278731—5	647026—30	1014866—70	1344131—5	1804141—5
284096—100	647277—80	1021856—60	1381011—5	1813466—70
286651—5	666516—20	1026692—5	1399016—20	1817041—5
297351—5	677336—40	1029336—40	1439071—5	1833556—60
313676—80	683346—50	1032951—5	1442616—20	1857871—5
321176—80	684572—5	1037576—80	1455441—5	1870437—40
328816—20	693131—5	1047671—5	1456241—5	1911606—10
337111—5	703241—5	1055971—5	1476671—5	1944346—50
358736—40	706951—5	1073426—30	1480396—400	1958716—20